ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1 ՆՈՅԵՄԲԵՐԻ
2022 թ.
№ 15 (1094)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Հայկական պետական մանկավարժական համալսարանը հիմնադրվել է 1922 թվականի նոյեմբերի 7-ին

Որքա՜ն եռանդ էր պետք, որքա՜ն համոզվածություն, որպեսզի չեղած տեղում ստեղծվեր հայկական պետական մանկավարժական ինստիտուտ: Չկային դասախոսներ, չկային նույնիսկ բավականաչափ ուսանողներ: Եվ համբերատարությամբ պետք էր հավաքել և՛ սրանց, և՛ նրանց: Կար սակայն նոր հասարակարգ՝ նոր ու շողշողուն ապագայով, կար հավատ դեպի ծաղկող գալիքը, կար դժվարությունները հաղթահարելու կամք…
Եկավ օրը, և եղան դասախոսներ ու ուսանողներ, եղան գրքեր, դասագրքեր: Կրթօջախն իր վրա առավ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի անունը, գործեց աբովյանավարի և ծառայեց մեր ժողովրդին՝ իբրև ուսուցչական կադրերի մեծ դարբնոց;

Արարատ ՂԱՐԻԲՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆԻ շնորհավորական ուղերձը Հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակի առթիվ

Հարգելի տիկին Գևորգյան

Շնորհավորում եմ Ձեզ, Հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողներին և շրջանավարտներին՝ համալսարանի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ:

Մանկավարժական համալսարանն իր 100-ամյա կայացման ու զարգացման ընթացքում առերեսվել է բազում դժվարությունների հետ և, իհարկե, գրանցել նշանակալի հաջողություններ և այս ճանապարհին հավատարիմ է մնացել իր հիմնարար առաքելությանը՝ կրթել ու պատրաստել ուսուցիչների:

Անհնար է գերագնահատել պատասխանատվության այն չափաբաժինը, որն ունեն Մանկակավարժական համալսարանն ու նրա շրջանավարտները մեր պետության ու սերունդների առաջ:

Հայաստանի անկախության հռչակումից հետո մանկավարժական համալսարանը կանգնեց նոր խնդրի և նոր մարտահրավերների առաջ՝ գտնել բարեփոխվելու, զարգացման նոր փուլ մտնելու ճկունություն և ներուժ, որպեսզի իր հնարավորությունների սահմանում նպաստի և աջակցի անկախ հանրապետության քաղաքացիների գիտակցության և արժեհամակարգի ձևավորման նվիրական գործին:

Այսօր վստահաբար կարող ենք նշել, որ համալսարանը պատվով է իրագործում իր առաքելությունը: Միևնույն ժամանակ կրթությունը շարունակաբար բարեփոխվող շարժում է, որը չի կարող կանգ առնել և ներկայումս էլ Մանկավարժական համալսարանը պետք է իր բոլոր ջանքերը ի մի բերի հերթական մարտահրավերների հաղթահարման համար:

Վստահ եմ, որ Հայկական պետական մանկավարժական համալսարանը ի զորու է արժանվույնս արձագանքել ժամանակի պահանջներին, իր մեջ գտնել բարեփոխվելու այն ներուժը, կամքն ու գաղափարը, որը կերաշխավորի համալսարանի անխափան զարգացումը, որովհետև համալսարանները կամ կրթական որևէ հաստատություն, դրանք շենքերն ու կառույցները չեն, այլ միտքը, արժեքները, բովանդակությունը, գիտելիքն ու այդ գիտելիքը փոխանցելու հմտությունը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

Նոյեմբերի 7-ին լրանում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100 տարին: Յուրաքանչյուր հոբելյան իր խորհուրդն ունի: Սա տարեգրություն է, որի մեջ Մաշտոցի գրերի լույսը կա, Նարեկացու հոգու մրմունջը, Աբովյանի հոգևոր հավատն ու մտքի պայծառությունը: Տարեգրություն, որի էջերն այսօր թերթում ենք ակնածանքով:

Մանկավարժական համալսարանը 100 տարի ուղեկցել է սերունդների հարափոփոխ երթին՝ կրթել ու դաստիարակել երիտասարդներին, նրանց մեջ ձևավորել ազգային հոգեկերտվածք ու նվիրում ուսուցչի առաքելության հանդեպ:

Կրթության հանդեպ սերն ու ձգտումը դարեր ի վեր բնորոշել է հայ մարդուն, նրա տեսակը ճանաչելի դարձրել աշխարհին: 100-ամյա Մանկավարժականը հայ ժողովրդի պատմության մի մասնիկն է, մտավորականների տարբեր սերունդների պատմությունն՝ ուսյալ և ուսուցանող, խոհուն ու խորհրդավոր, երևելի ու երևակայության սահմանները իրականությանը մոտեցնող… Այդ պատմության մեջ մանկավարժ գիտնականների՝ տարիների տքնանք կա և գիտության ու կրթության հանդեպ ջանադիր ձգտումի անխափան երթ:

Ցավոք, այդ պատմության մեջ նաև նորօրյա պատերազմում նահատակված մեր ուսանողների ու շրջանավարտների կորստի ցավն է, հերոսների, որոնք իրենց կյանքը նվիրեցին Հայրենիքին:

Մեր ուսանողն ապագա Ուսուցիչն է, որ կրթելու է ապագա ինժեներին ու շինարարին, բժշկին ու հողագործին, բարձր տեխնոլոգիաների մասնագետին…

21-րդ դարը մարտահրավերների ժամանակաշրջան է, երբ ուսուցչի կերպարն ինչ-որ չափով խաթարվել է արժեքների փոփոխման պտույտի մեջ, սակայն ունենք Ուսուցչի առաքելության գիտակցումով աշխատող նվիրյալների մի մեծ բանակ, որի զենքը հայրենասեր սերունդ դաստիարակելու գաղափարախոսությունն է, հայ երեխայի մեջ գիտելիքների ձեռքբերման հանդեպ ցանկությունների սերմանումը, որովհետև կրթությունը հայ մարդու ապրելու կերպն է, նրա արարող մտքի հարատև ընթացքը:

Հոբելյանի առթիվ շնորհավորում ենք սերնդակրթության հրաշալի ավանդույթներ ունեցող Մանկավարժական համալսարանի հին ու նոր սերունդներին, շրջանավարտներին, դասախոսներին և ուսանողներին, բոլոր նրանց, ում համար հարազատ ու թանկ է այս բարձրագույն կրթական հաստատությունը:

Մաղթում ենք բոլորին սեր, համերաշխություն և պատվախնդիր կեցվածք իրենց լուսավոր առաքելության հանդեպ:

Ժաննա ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ

Համալսարանը հիմնադրվել է մեր ժողովրդի համար բախտորոշ ժամանակահատվածում, երբ ավելի քան թարմ էին Հայոց եղեռնի հետևանքները՝ բազմաթիվ գաղթականներով, որբերով, սոցիալական խնդիրներով, ակներևաբար զգացվում էին առաջին աշխարհամարտի, պատերազմի, հեղաշրջման և խորհրդայնացման հետցնցումները:

Համալսարանը դասերն սկսել է Ամիրյան փողոցի վրա այսօր էլ կանգուն Հռիփսիմյան օրիորդաց գիմնազիայի շենքում՝ Արշավիր Շավարշյանի առաջնորդությամբ, որ Ենայի ու Լայպցիգի համալսարաններում մանկավարժություն և հոգեբանություն ուսումնասիրելուց հետո վերադարձել է, զբաղվել ուսուցչությամբ՝ կարիքի դեպքում ուսուցչությունը համադրելով զինվորական գործին՝ դասերից ազատ ժամանակ զինվորագրվելով Ջորավար Անդրանիկի կամավորների գնդին:

Այդ դրվագին նվիրված պատումի վերջում Անդրանիկը դիմում է Շավարշյանին՝ ասելով. «Այսուհետև մեր ճանապարհները տարբեր ուղղությամբ են ընթանալու: Դու, այսուհետև, գրիչդ ձեռքդ առ դեպի դպրոց գնա՝ գիտություն ուսուցանելու մեր երիտասարդներին, իսկ ես զենքս ձեռքիս մեր ժողովրդի կյանքը պաշտպանեմ»:

Շավարշյանն այնուհետ նշանակվում է Երևանի նահանգի տարրական դպրոցների շրջանային տեսուչ, զբաղվում գյուղական վայրերում դպրոցների բացման ու վերաբացման հարցերով, տեսնում մանկավարժների խիստ պահանջը և ձեռնամուխ լինում մանկավարժական կադրերի պատրաստմանը՝ գիտակցելով դրա անհրաժեշտությունը:

Այսօր մանկավարժական համալսարանի հարյուրամյակը նշում ենք մեր երկրի համար ոչ պակաս բախտորոշ ժամանակահատվածում, երբ կրկին ամրապնդվում է հանրային այն գիտակցությունը, որ կրթությունը կարող է և պետք է լինի մեր առջև կանգնած մարտահրավերների լուծման բանալին: Այստեղ մանկավարժական համալսարանն ունի վճռորոշ առաքելություն՝ պատրաստել կրթության ոլորտի այն մասնագետներին, այն ուսուցիչներին, որոնք ի զորու են փոփոխվող և բարդ աշխարհում առաջնորդել մեր երեխաներին և նրանց սովորեցնել ամենակարևոր հմտությունը՝ սովորեցնել սովորելու կարողությունը: Այդ խնդրի լուծման համար մանկավարժական համալսարանն ինքը վերափոխման կարիք ունի՝ դառնալու կրթության համալսարան, որտեղ հասանելի են մասնագիտական կրթության ծրագրեր կրթական տեխնոլոգիաների, կառավարման, գնահատման, թեստաբանության, կրթության ոլորտի հետազոտությունների, զարգացման հոգեբանության և բազմաթիվ այլ ուղղություններով, առանց որոնց անհնար է կրթական համակարգի արդիականացումը, որտեղ պատրաստվում են ուսուցչի մասնագիտական չափանիշներին և հանրակրթության նոր չափորոշիչներին համապատասխան ուսուցիչներ, աջակցող մասնագետներ: Մանկավարժական համալսարանը պետք է դառնա ուսումնական հաստատությունների այսօրվա աշխատակիցների խորհրդատուն ու աջակիցը՝ շարունակական կրթության, մենթորական ծրագրերի միջոցով, աջակցի ոլորտում քաղաքականության մշակմանը՝ նորարար առաջարկներ, մեթոդաբանական լուծումներ ներկայացնելով:

Այս խնդիրները լուծելու համար մանկավարժական համալսարանը կարիք ունի պետական և հանրային հատուկ հոգածության և աջակցության, որը, գումարվելով բուհի փորձառությանն ու ավանդույթներին, կդառնա վաղվա լավ օրվա գրավականը:

Արդ, բացենք մանկավարժական համալսարանի նոր հարյուրամյակի առաջին էջը՝ սեփական պատմության ու առավելությունների իմացությամբ, խնդիրների սթափ գիտակցությամբ և առաջ գնալու հստակ պատրաստակամությամբ:

«Դա նվիրյալների մասնագիտություն է, և այս մարդկանց և՛ արժեհամակարգը, և՛ առաքելությունը, և՛ մասնագիտական կարողությունները հատուկ վերաբերմունքի են արժանի»,-

ասում է Սրբուհի Գևորգյանը

- Տիկին Գևորգյան, ներկա բարդ, մարտահրավերներով լի ժամանակաշրջանում Դուք ընտրվեցիք, թույլ տվեք ասել՝ խիզախեցիք ստանձնել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնը…

Համալսարանն ավելի լավը դարձնելու մտայնությամբ թերևս. չէ՞ որ Դուք այս բուհի շրջանավարտն եք, այս բուհի հետ է կապված Ձեր աշխատանքային կենսագրությունը, այդ թվում՝ նաև գիտական առաջընթացը:

-Այո, այնպես ստացվեց, որ բուհի 100-ամյակի նախաշեմին ես ստանձնեցի ռեկտորի պարտականությունները և պետք է ընդգծեմ՝ շատ մեծ պատասխանատվությամբ և խոր ակնածանքով դեպի բոլոր տարիներին բուհի գործունեության մեջ ներդրում ունեցած և՛ ռեկտորները, և՛ նվիրյալները, և բոլոր այն հսկաները, որոնք պայմանավորել են Մանկավարժական համալսարանի զարգացումը 100 տարի:

Երբ փորձում ենք պատկերացնել՝ կրթության և գիտության ոլորտի ինչ ներուժի մասին է խոսքը գնում՝ մանկավարժության և մանկավարժության դասավանդման մեթոդիկան, արվեստի բնագավառը, ուսուցչական կրթական գործընթացի հոգեբանական առանձին գործընթացները ուղեկցող կառավարումը… Ավելացնեմ Հատուկ կրթության ֆակուլտետը, որովհետև տարիների ընթացքում համալսարանը զարգացումներ է ապրել՝ նոր մասնագիտությունների ներդրումով:

Պետք է ասել, որ 100 տարվա ընթացքում համալսարանը հաջողել է իր առաքելության մեջ՝ ուսուցչական համակազմի օրեցօր բարելավվող գործընթացների որակական հենքով: Եվս մեկ անգամ պետք է ընդգծեմ այն խոր ակնածանքը, որը տածում եմ նախորդ բոլոր կազմակերպիչ-կառավարիչ ռեկտորների գործունեության, բոլոր այն ընտրյալների, ականավոր մասնագետների հանդեպ, որոնց ներդրումով է պայմանավորված այսօրվա Մանկավարժականի զարգացումն ու ձեռքբերումները, բոլոր այն ուսանողների, որոնք տարբեր տարիների իրենց մասնագիտական նկրտումները կապել են մանկավարժական համալսարանի հետ, որի արդյունքում մենք ունենք ուսուցիչների հսկայական բանակ:

- Ո՞րն է Մանկավարժական համալսարանի Ձեր տեսլականը. հնարավոր և անհնար քայլերի, որոշումների համատեքստում ի՞նչ էական փոփոխությունների սպասել:

- Ես կխոսեմ միայն ակնառու գործընթացների և ձեռքբերումների մասին: Ուզում եմ ընդգծել մեր 10 ֆակուլտետների, մասնավորապես Հատուկ կրթության ֆակուլտետի գործունեությունն ու ձեռքբերումները, միջազգային փորձը Մինեստայի համալսարանի հետ: Հենց այդ գործընկերների օգնությամբ է պայմանավորված մեր դասագրքաստեղծ գործունեությունը, որը նաև խոսում է մեր համարժեք որակի ու գործունեության, միջազգային հարթակներում ներդրում ունենալու, լոգոպեդների, էրգոթերապևտների, հատուկ մանկավարժների գործունեության մասին՝ կապված ներառականության ռազմավարության հետ: Այդ ասպարեզում մենք մեծ ձեռքբերումներ ունենք:

Պետք է հատուկ նշեմ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի գործունեությունը, նաև որպես ինձ համար հարազատ ֆակուլտետ, և այն նվիրումը, որը ցուցաբերում են պրոֆեսորադասախոսական անձնակազմը, նաև ուսանողները, հատկապես ճգնաժամային պահերին, ինչի վկայությունը հենց 2020 թվականի ողբերգական իրադարձությունների ընթացքում կատարված աշխատանքն է՝ մեր զինվորներին, ռազմական ստորաբաժանումներին, զավակներ կորցրած ընտանիքներին, տեղահանված ընտանիքներին ցուցաբերած հոգեբանական աջակցությունը:

Որպես համալսարանի ամենահին ֆակուլտետներից մեկը՝ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետը թե՛ հանրապետությունում, թե՛ միջազգային հարթակներում պատիվ է բերել համալսարանին:

Հպարտությամբ պիտի նշեմ Պատմության և հասարակագիտության և Բանասիրական ֆակուլտետները, որտեղ աշխատել են և աշխատում են բազմաթիվ անվանի դասախոսներ, որոնց՝ կրթական զարգացումներին ուղղված պատգամները այսօր էլ արդիական հնչեղություն ունեն զարգացումների նոր համատեքստում:

Ցավով պետք է նշեմ, որ բնագիտական ոլորտի ուսուցիչների թիվը վերջին տարիներին մեծապես նվազել է: Մեր ներկայացմամբ և լիազոր մարմնի ջանքերի շնորհիվ կառավարության հաստատմանը ներկայացվել են երկակի որակավորումների մասնագիտություններ, ինչը հնարավորություն կստեղծի սահմանային, գյուղական վայրերում և որտեղ բնագիտական մասնագիտությունների կարիքը կա, ուսուցիչը երկու առարկա դասավանդի: Դա կոնկրետ առավելություն է, ինչպես և առավելություն է բնագիտական առարկաների ուսուցիչներին հավելավճարներ տալը՝ 50-100 հազար դրամի չափով: Դա ինչ-որ չափով աջակցություն կլինի սովորող ուսանողի համար՝ կրթության կարիքները հոգալու և սոցիալական մարտահրավերներին պատրաստ լինելու առումով:

Առաջիկայում հանդես կգանք բնագիտության ոլորտի ևս մի շարք առաջարկություններով: Լիահույս եմ՝ այն հմայքը, որ մեր ֆիզիկայի և մաթեմատիկայի մասնագետները ունենալու են, վերադառնալու է դպրոց՝ նոր շքեղությամբ:

Խոսելով արվեստի բնագավառի մասին՝ պետք է ասել, որ դա մշտապես հատուկ հպարտություն է եղել Մանկավարժական համալսարանի համար՝ մշակույթի ոլորտի անվանի գործիչները, հայ կինոյի հսկաները բուհում ստեղծել են ստեղծագործական յուրահատուկ միջավայր ուսանողների համար:

Թույլ տվեք ապագայի մասին չխոսել. կան որոշակի նպատակներ և երազանքներ, որոնց մասին կխոսենք արդեն իրականացնելուց հետո:

- Հե՞շտ է արդյոք լինել Մանկավարժական համալսարանի ռեկտոր. պրոֆեսորադասախոսական ներուժի և աշխատանքային անձնակազմի հետ հարաբերություններում ի՞նչն է Ձեզ օգնում կամ խանգարում:

- Առաջնորդել պրոֆեսորադասախոսական անձնակազմի, մտավորականների, գիտնականների այնպիսի բանակ, ինչպիսին մեր համալսարանինն է, բավականաչափ ծանր է ու բարդ, որովհետև նրանցից յուրաքանչյուրն անհատականություն է՝ իր կարողություններով, ներազդման դաշտով, մասնագիտական ոլորտում իր ձեռքբերումներով ու նկրտումներով, սոցիալական ձեռագրաբանության իր տեսակով, և բնականաբար, իրենք էլ մշտապես շատ որոշակի վերաբերմունք ունեն այն անձանց նկատմամբ, որոնք պաշտոնապես առաջնորդում են իրենց: Այդ մարդկանց հետ աշխատելու իմ հաջողության գրավականն այս բուհում երկար տարիներ՝ 38 տարի, աշխատելու փաստն է, նրանց ճանաչելու, համալսարանի պատմության մեջ նրանց ձեռքբերումներն իմանալու փաստը, նաև բացթողումների մասին իրազեկված լինելը… Երբ հասկանում են, որ խոսում ես ոչ թե իրադրային վիճակից ելնելով, այլ խնդիրը պայմանավորված է ոլորտի զարգացման խորը մտահոգությամբ՝ դա որոշակիորեն հնարավորություն է տալիս աջակիցներ ունենալ:

- Աշխատանքային գործընթացում ճիշտ ղեկավարելու, երբեմն էլ ստեղծված անելանելի իրավիճակներում հնարավոր օպտիմալ լուծումներ գտնելու հարցում որքանո՞վ է Ձեզ օգնում կամ ուղղորդում սոցիալական հոգեբանի Ձեր մասնագիտությունը:

- Կարելի է ասել, իմ բոլոր ձեռքբերումները սուբյեկտ-սուբյեկտային փոխներգործության շրջանակներում պայմանավորված են հենց սոցիալական հոգեբանության ոլորտում գիտելիքների ու կարողությունների ձեռքբերումներով: Սոցիալական հոգեբանությունը մեր կենսակերպն է՝ այն բոլոր սոցիալական և բազմաբնույթ կապերի մեկնաբանման հնարավորությամբ, որը շրջապատում է մեզ: Եթե հաշվի առնենք, որ սոցիալական հոգեբանության ուսումնասիրման օբյեկտը խումբ-անհատ փոխազդեցությունների շրջանակն է, ուստի ստացվում է, որ դիրքորոշումների, արժեբանության, սոցիալական փոխազդեցությունների շրջանակը, որը պայմանավորում է անձ-խումբ-հասարակություն միջնորդավորված կապերը, այն տիրույթն է, որտեղ մենք արձանագրում ենք մեր կարողությունները: Եվ ես շնորհակալ եմ այդ ոլորտին բոլոր այն ձեռքբերումների համար, որոնք կենսական առումով վավերացվում են հենց պրակտիկայի ընթացքում:

- Ուսուցչի մասնագիտական որակավորման գործընթացում ըստ Ձեզ որո՞նք են այն տեսանելի քայլերը, որ կարող են հիմնովին փոխել հասարակության վերաբերմունքը ուսուցչի նկարագրի հանդեպ: Ուրիշ ինչո՞վ եք պայմանավորվում ուսուցչի կերպարի վերարժևորումը:

- Դարեր շարունակ ուսուցիչը եղել է իմացական պահանջմունքի բավարարման միակ աղբյուրը, բոլոր ժամանակներում անվերապահորեն վայելել է հարգանք և հատուկ ակնածանք հասարակության կողմից: Դարը փոխվեց, և կրթական համակարգը զերծ չմնաց ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցությունից: Այսօր համացանցը, հզոր տեղեկատվական կրիչները մասնագիտական դաշտում ուսուցչի հիմնական մրցակիցներն են, և վերջինս դադարել է իմացական պահանջմունքի բավարարման միակ օբյեկտը լինել: Եթե նայենք սոցիալական տեսանկյունից՝ ցավոք պիտի նշենք, որ ուսուցիչը երբեք չի եղել ամենաբարձր վարձատրվող մասնագետների շարքում, և դա է միգուցե հասարակության և երիտասարդների վերաբերմունքի հիմքը: Ժամային ծանրաբեռնվածությունն էլ նպաստեց նրան, որ ուսուցիչը չէր կրող որակական առումով բավարարել հասարակական սպասումները: Այսպիսով ուսուցիչն ավելի շատ հայտնվեց քննադատության դաշտում, մասնագիտության գրավչության խթանի բացակայությամբ:

Երբ մենք խոսում ենք ֆիննական և սկանդինավյան երկրների կրթության փորձի և ուսուցչի կարգավիճակի մասին, պետք է հաշվի առնենք սոցիալական այն երաշխիքները, որ նրանց պետությունը տալիս է ուսուցչին, իհարկե, խիստ չափանիշներով պայմանավորելով այդ զարգացումը:

Իհարկե, պետք է ասել՝ այն քայլերը, որ այսօր նախաձեռնվում են կամավոր ատեստացիայի հետ կապված, կարևոր են ուսուցչի աշխատավարձի բարձրացման տեսանկյունից: Բայց կարծում եմ նախ պետք է կարևորել ուսուցչի մասնագիտական կարողության և հասարակության մեջ նրա իմիջի ձևավորման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ փաստ է, որ մեր կյանքում առկա են տեղեկատվական տեխնոլոգիաները, սակայն ոչ մի տեխնոլոգիա չի կարող երբևիցե փոխարինել մարդուն: Որովհետև հոգեբանամանկավարժական տիրույթի բաղադրիչների իմացությունը, հոգեֆիզիոլոգական օրինաչափությունները, կարողությունների հմուտ տիրապետումը բավականաչափ բարդ խնդիրներ են, և այսօր ուսուցչին ներկայացվում են իրապես շատ բարձր չափանիշներ ու պահանջներ: Այնուամենայնիվ, դա նվիրյալների մասնագիտություն է, և ես գտնում եմ, որ սոցիալական երաշխիքները պետք է էլ ավելի շատ լինեն, որովհետև այս մարդկանց և՛ արժեհամակարգը, և՛ առաքելությունը, և՛ մասնագիտական կարողությունները հատուկ վերաբերմունքի են արժանի:

- Ձեր բազմազբաղ աշխատանքը չի՞ խլում արդյոք ընտանիքի հետ ավելի շատ շփվելու ժամանակից: Ո՞րն է կնոջ երջանկության Ձեր բանաձևը:

- Խլում է: Անկեղծ չեմ լինի, եթե ասեմ, որ բացարձակապես հասցնում եմ տանը որպես մայր, կին իմ պարտականությունները լիարժեք կատարել: Այս պատասխանատվության տիրույթը ոչ միայն մասնագիտական, այլև հոգեբանական ներուժ է պահանջում: Այդ առումով ես ընտանիքում բացթողումներ ունենում եմ, բայց պետք է հավելեմ, որ տանը ընբռնումով են մոտենում, որովհետև գիտակցում են, որ իմ պատասխանատվության տիրույթը ենթադրում է բազմաբովանդակ գործունեություն, և միշտ չէ, որ բավարար ժամանակ է մնում՝ կարողանալու ընբոշխնել ընտանեկան այն հարմարավետ միջավայրը, որին յուրաքանչյուրս ձգտում ենք:

Որպես սոցիալական հոգեբան ես գիտեմ, որ մարդը երբեք չի կարող ամբողջությամբ բավարարված լինել, որովհետև պահանջմունքներն ունեն վերարտադրվելու կարողություն: Մեզ մոտ միշտ այնպիսի տպավորություն է, թե կյանքի լավագույն շրջանը դեռ լինելու է: Բայց որպես հոգեբան պետք է ասեմ, որ լավագույն շրջանը հենց այսօր է, ուստի յուրաքանչյուրը պետք է գնահատի այն ամենը, ինչը օրվա ընթացքում կյանքը իրեն հրամցնում է:

- Ձեզ բախտ է վիճակվել լինել Մանկավարժական համալսարանի ռեկտորն այն ժամանակահատվածում, երբ բուհը նշում է իր հիմնադրման 100-ամյակը: Համալսարանի հոբելյանի շեմին ի՞նչ զգացողություններ ունեք, նաև՝ ցանկություններ ու երազանքներ: Ինչպիսի՞ն կուզենայիք տեսնել 100-ամյա համալսարանի ապագան:

- Զգացմունքների խառվք է ինձ մոտ, մի յուրօրինակ սպասումով եմ համակվում՝ որքան մոտենում է համալսարանի հիմնադրման օրը: Համալսարանի յուրաքանչյուր երկարամյա աշխատող, կարծում եմ, կիսում է այդ զգացողությունը: Եվ դժվարանում եմ նկարագրել՝ ինչպիսին եմ տեսնում մյուս հարյուրամյակի մեր Մանկավարժականը, որովհետև սա առաջնորդ և առաջընթաց ապրող բուհ է, որին ցանկանում եմ խաղաղ երկնքի ներքո զարգացման նոր ընթացք:

- ՀՊՄՀ պաշտոնաթերթի միջոցով ի՞նչ կմաղթեք մեր համալսարանի դասախոսներին և ուսանողներին, շրջանավարտներին, բուհի բոլոր աշխատողներին, հայ ուսուցչին:

- Ներքին խաղաղություն, որը խարխլվել է յուրաքանչյուրիս մոտ վերջին շրջանում: Ես ուզում եմ, որ մենք վերագտնենք մեր հոգեկան հավասարակշռությունը, հոգու ներդաշնակությունը, որը պայմանավորված է արտաքին անվտանգության ապահովմամբ: Կարծում եմ, որ ներքին խաղաղության վերագտնումը մեզ հնարավորություն կտա նորովի շարունակել մեր աբովյանական առաքելությունը:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Տարեգրության էջերից

(«Մանկավարժական համալսարան» թերթում բուհի 90-ամյակի հարցազրույցներից)

Էդուարդ Մուշեղի ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՊՄՀ 1987-1989 թթ. ռեկտոր, Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Մանկավարժի մասնագիտությունը պետք է կրկին արժևորվի

Ուսուցչի գործառույթներն այսօր շատ են փոխվել. 20-30 տարի առաջ աշակերտի գիտելիքի միակ աղբյուրը մանկավարժն էր, հիմա իրավիճակն այլ է. նա պետք է լինի ճարտարապետ-մեթոդաբան, աշակերտին կարողանա ուղղորդել սովորել, գիտելիք ձեռք բերել, նա պետք է սովորի սովորեցնել:

Ժամանակակից ուսուցիչը պետք է լինի անթերի մասնագետ, կիրառի ուսուցման տարաբնույթ մեթոդներ, անկախ մասնագիտությունից կատարյալ տիրապետի մայրենիին, աշակերտի մեջ կերտի ազգային բնավորություն:

Այսօրվա երիտասարդներն ընտրում են տնտեսագետի, իրավաբանի, վատագույն դեպքում՝ լեզվաբանի մասնագիտությունը:

Օտտո Բիսմարկն ասում էր՝ ավստրոպրուսական պատերազմում հաղթեց ուսուցիչը, նույնը եղավ նաև Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմում: Այդ ժամանակ մանկավարժը, գիտնականը հեղինակություններ էին: Ցանկանում եմ, որ Մանկավարժականը կրկին գրավիչ դարձնի այդ մասնագիտությունը և վերադարձնի դրա իրական արժեքները:

Մանկավարժականը միշտ էլ կարևորվել է մեր ժողովրդի կյանքում: Բուհն ուսուցչական կադրեր պատրաստող դարբնոց է, որն ունի մեծ առաքելություն կրթական ամբողջ համակարգում. այն պետք է ժամանակակից դպրոցն ապահովի բարձր որակավորմամբ ուսուցիչներով:

Գևորգ Երվանդի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՊՄՀ ռեկտոր 1994-1999թթ., Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Մանկավարժական համալսարանն այն բուհն է, որին պետք է նվիրվեն

Գիտության և կրթության կառավարման միջազգային բոլոր փորձերի արդյունքում պետք է լինի՝ ինչ սովորեցնել երեխային: Աշակերտը, գնալով դպրոց, պետք է մտածի միայն սովորելու մասին:

Իմ ռեկտորության տարիներին բուհի մեկ հոբելյան նշել ենք: Ուսանողներից սկսած մինչև դասախոսներ պետք է հպարտանան, որ սովորում ու աշխատում են այս բուհում, որովհետև այս բուհն ունի մեկ առաքելություն, որը բուհի ռազմավարության, մեր ժողովրդի պահպանման ու գոյատևման հիմքն է: Հետևաբար նրանց համար պարծանք պետք է լինի և հպարտություն: Մանկավարժական համալսարանն այն բուհն է, որին պետք է նվիրվեն, նրանով հպարտանան և աշխատեն, որ որ այստեղից դուրս եկողները նույն զգացողությունն ունենան:

1948 թվականին Խաչատուր Աբովյանի 100–ամյա տարելիցի կապակցությամբ, Մանկավարժական ինստիտուտը կոչվեց հայ ականավոր գրող, մանկավարժ, մեծ լուսավորիչ, աշխարհաբարի հիմնադիր Խաչատուր Աբովյանի անունով:

1972 թվականին, 50–ամյակի առթիվ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը ՍՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով՝ «Ուսուցչական կադրերի պատրաստման և մանկավարժական գիտության զարգացման գործում չեռք բերած մեծ հաջողությունների համար»:

Միշտ երազել եմ մեր հայրենիքի մասին

Հեռու Տրանսիլվանիայի (այժմ Ռումինիա) Հայաքաղաքում (Armeno-polis, այժմ Գեռլա), հունգարահայ ընտանիքում ծնվելով և մեծանալով՝ միշտ երազել եմ մեր հայրենիքի մասին, բայց այցելելու հնարավորություն չեմ ունեցել: Այդ հնարավորությունն ունեցա 2009 թվականին և ընդունվեցի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Գրադարանագիտության և մատենագիտության բաժին: Ես դարձա ուսանող և մինչև այժմ էլ սիրով եմ հիշում այն ջերմ վերաբերմունքը, որով ինձ ընդունեցին համալսարանում: Հայրենիք տեղափոխվելու ժամանակ դեռ չէի տիրապետում մեր չքնաղ մայրենի լեզվին, բայց նած ցուցաբերված աջակցության շնորհիվ ես դժվարությունների չհանդիպեցի: Ուսման տարիների ընթացքում արդեն սկսել եմ աշխատել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, հին ձեռագրերի պահպանման և ուսումնասիրման կենտրոնի արխիվային բաժնում, և մինչև հիմա շարունակում եմ այնտեղ աշխատել:

Մանկավարժական համալսարանում եմ ստացել նաև մագիստրոսի աստիճանը՝ սովորելով Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության ամբիոնում:

Շնորհակալ եմ այստեղ ձեռք բերած գիտելիքների համար: Շնորհավորում եմ սիրելի համալսարանի հոբելյանը՝ մաղթելով նրան նոր զարգացումներ և առաջընթաց:

Լալո Բորբելի

Հոգեբանական մտքի զարգացման դարբնոցը

1948-1949 ուսումնական տարում Մանկավարժականում հիմնադրվել է հոգեբանության-տրամաբանության ֆակուլտետը: Պետք է ընդգծել, որ 1957 թվականին ինստիտուտին կից ստեղծված հոգեբանության պրոբլեմային լաբորատորիան հոգեբանական մտքի հետագա զարգացման կարևորագույն գործոններից էր:

Տարիներ շարունակ ֆակուլտետը, Հոգեբանության ամբիոնը և լաբորատորիան եղել են հայ հոգեբանական մտքի զարգացման դարբնոց: Հոգեբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, ԽՍՀՄ ՄԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ Մկրտիչ Մազմանյանի գլխավորությամբ լաբորատորիայում հետազոտվել և մշակվել են աշխատանքային ու դպրոցական հոգեբանության հիմնախնդիրներ:

Մ. Մազմանյանը զբաղվել է ստեղծագործության հոգեբանությամբ, մասնավորապես ստեղծագործական պրոցեսում անգիտակցականի ունեցած նշանակության, հոգեբանության պատմության և տեսության հարցերով, Գուրգեն Էդիլյանն առաջին մանկավարժ հոգեբանն է, ով Հայաստանում դրեց հոգեբանական գիտական մտքի էքսպերիմենտալ ուսումնասիրությունների հիմքերը:

Պրոբլեմային լաբորատորիայում իրենց բեղմնավոր գործունեությունն են ծավալել հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Էմմա Ալեքսանդրյանը, Սերգեյ Արզումանյանը, Վլադիմիր Կարապետյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտներ Մուշեղ Երիցյանը, Սուսաննա Փիլոսյանը, Ռուբեն Պողոսյանը, Արծվիկ Զաքարյանը, Հռիփսիմե Ղաջոյանը. Կլարա Սանթրոսյանը, Հասմիկ Պետրոսյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազգուշ Հակոբյանը, Լուսիկ Քուրքչյանը, Լենա Երիցյանը և այլք:

Տարիքային և մանկավարժական հոգեբանության, մասնագիտական կրթության, ինչպես նաև բուհում ուսանողների հարմարման խնդիրների, զգայական իմացության և ստեղծագործական հոգեբանության, կրտսեր դպրոցականների մտածողության հիմնախնդիրների ուղղությամբ իրականացված հետազոտությունները հիմք դրեցին Հայաստանի Հանրապետությունում հոգեբանական դպրոցների ձևավորմանն ու զարգացմանը: Մանկավարժական բուհում գործող հոգեբանության ամբիոններն իրենց մեծ ներդրումն են ունեցել գիտական ներուժի պատրաստման գործում:

Սովորողների մտածողության ձևավորման և զարգացման, ինչպես նաև ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման հարցերին է անդրադարձել Հայաստանում մտածողության հոգեբանական դպրոցի հիմնադիր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կառլեն Ոսկանյանը, ում ղեկավարած ասպիրանտները՝ հ.գ.դ., պրոֆեսորներ Սամվել Խուդոյանը (հոգեթերապիա), Կամո Վարդանյանը (սուիցիդալ հոգեբանություն) հետագայում զարգացրել են հոգեբանության տարբեր բնագավառներ, ղեկավարել ամբիոններ, գիտահետազոտական կենտրոններ, դարձել հոգեբանական գիտությունների միջազգային ակադեմիայի թղթակից անդամներ, Հայկական հոգեբուժական ասոցիացիայի խորհրդի անդամներ:

Հոգեբանության երախտավոր հ.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Արզումանյանը մեծապես նպաստել է Հայաստանում իրավաբանական հոգեբանության, մանկական հոգեբանության և ընդհանրապես հոգեբանական գիտական մտքի զարգացմանը: Նրա և մեծանուն այլ հայ հոգեբանների ջանքերով հիմնված Հոգեբանության և մանկավարժության ֆակուլտետը պատրաստել է հոգեբաններ հանրակրթական, միջին մասնագիտական հաստատությունների, պաշտպանության և արդարադատության համակարգերի համար՝ հիմք դնելով հանրապետությունում նոր ուղղությունների զարգացմանը: Ներկայումս բուհի գիտական ներուժը համալրում են հենց նրա նախկին ուսանողները, ասպիրանտները, այսօր արդեն գիտությունների թեկնածու, դոցենտներ Ռուզաննա Պետրոսյանը, Գայանե Խաչիկյանը, Անահիտ Արզումայանը, Վահան Սարգսյանը, Եվա Հովհաննիսյանը և այլք:

Ճինվորական հոգեբանության երախտավորներից են հ.գ.դ. Վազգեն Մարգարյանը, հ.գ.թ., դոցենտ Զարգանդ Ասատրյանը, ովքեր երկար տարիներ կրթել և համալրել են զինվորական հոգեբանների շարքերը, իսկ Արտակարգ իրավիճակների հոգեբանության մեջ իր մեծ ներդրումն ունի Մելս Մկրտումյանը:

Հանրապետությունում տարիքային և մանկավարժական հոգեբանական մտքի զարգացման երախտավորներից են հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Վլադիմիր Կարապետյանը, Էմմա Ալեքսանդրյանը: Լինելով Հայաստանում **առաջին կին դոկտոր**՝ Էմմա Ալեքսանդրյանը նախաձեռնել և հիմնել է Հայաստանում մանկան հոգեբանության վերականգնողական առաջին կենտրոնը: Խորհրդանշական է նաև, որ բուհի 100-ամյա պատմության մեջ **առաջին կին ռեկտոր** է ընտրվել նրա սան, Հայաստանում սոցիալական հոգեբանության ոլորտի հիմնադիրներից, հոգեբանական գիտությունների միջազգային ակադեմիայի թղթակից անդամ, Եվրոպայի հոգեթերապևտների լիգայի անդամ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սրբուհի Գևորգյանը:

Մանկավարժական համալսարանում հոգեբանության զարգացման, մասնագետների պատրաստման գործում երկար տարիներ իրենց ներդրումն ունեն հոգեբանական մտքի երախտավորների գիտական ազդեցության կրողներ, նախկին ուսանողներ, այսօր արդեն հոգեբանական գիտությունների թեկնածու դոցենտներ, ֆակուլտետի դեկան, Ալմաթիի Ինֆորմատիզացիայի միջազգային ակադեմիայի թղթակից անդամ Ռուզաննա Պետրոսյանը, փոխդեկաններ Լիդա Արամյանը և Սոնա Մակիչյանը, ամբիոնի վարիչներ Մարիաննա Ավետիսյանը, Լևոն Սարգսյանը: Մանկավարժական համալսարանը հոգեբանական մտքի զարգացման յուրահատուկ դարբնոց է, ուր հոգեբանության գիտական դպրոցների զարգացմանն այսօր իրենց նպաստն են բերում երիտասարդ կադրերը՝ կամրջելով հոգեբանության երեկն ու այսօրը:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ

Միջազգային համագործակցություն

Միջազգային համագործակցության բաժինը խթանում և իրականացնում է բուհի միջազգային համագործակցությունը օտարերկրյա առաջադեմ բուհերի և կազմակերպությունների հետ տարբեր ուղղություններով՝ Էրազմուս+ KA1 և KA2, «Ամառային դպրոց» միջազգային ծրագիր, Սփյուռքի և օտարերկրյա ուսանողների ընդունելություն, դասախոսություններ արտասահմանյան դասախոսների կողմից, վերապատրաստումներ, սեմինարներ, աշխատաժողովներ և կոնֆերանսներ, միջազգայնացված

ակադեմիական ծրագրեր և այլն:

Բուհը համագործակցում է միջազգային **6** կազմակերպությունների և **43** բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ (ՌԴ, Իտալիա, Իսպանիա, Ֆինլանդիա, Չինաստան, ԱՄՆ, Լիտվա, Լատվիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ֆրանսիա, Շվեյցարիա), իրականացնում է Էրազմուս + կրեդիտային շարժունության ծրագրեր **18** համալսարանների հետ Իսպանիայում, Իտալիայում, Ֆինլանդիայում, Էստոնիայում, Լիտվայում, Անգլիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Սլովակիայում, Ավստրիայում, Ճապոնիայում, Պորտուգալիայում:

2018-2021թթ. ՀՊՄՀ-ն համակարգել է Էրազմուս + բարձրագույն կրթությունում կարողությունների զարգացում (**573975-EPP-1-2016-1-AM-EPPKA2-CBHE-SP) BOOST** (**Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում)** ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ստեղծվել են www.studyinarmenia.am կայքը և study in Armeina տեսահոլովակը, որոնք լայն հնարավորություն են ընձեռում տեղեկություն ստանալու Հայաստանում կրթվելու մասին:

ՀՊՄՀ-ն նաև Էրազմուս + բարձրագույն կրթությունում կարողությունների զարգացում 2 ծրագրերի գործընկեր է **ARMDOCT** (Դոկտորական կրթության բարեփոխումը հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան) **և MODEST** (Գիտության ոլորտում հետբուհական կրթության արդիականացումը և դասավանդման մեթոդաբանության բարելավումը):

2013թ.-ից ի վեր ՀՊՄՀ-ն իրականացնում է **«Ամառային դպրոց»** միջազգային փոխանակման ծրագիրը, որի նպատակն է խթանել միջմշակութային հաղորդակցումը, բարելավել ուսանողների օտար լեզուների իմացությունը, տարածել հայկական մշակույթը արտերկրում, ՀՊՄՀ ուսանողներին հնարավորություն տալ ճամփորդել և ընդլայնել մտահորիզոնը: Ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ-ն համագործակցում է **13** համալսարանի հետ:

Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության անդամակցության շրջանակներում յուրաքանչյուր տարի ՀՊՄՀ ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու ֆրանկոֆոն երիտասարդական փառատոնին տարբեր երկրներում:

ՀՀ-ում Չինաստանի դեսպանության հովանավորությամբ ՀՊՄՀ-ում հիմնադրվել է **Չինական մշակույթի կենտրոն**, ինչպես նաև Օտար լեզուների ֆակուլտետում չինարենը որպես երկրորդ լեզու դասավանդելու նպատակով 2019թ. ՀՊՄՀ են եկել Չինաստանից երկու մագիստրոս:

Ընդլայնվել է համագործակցությունը Շվեյցարիայի հետ, մասնավորապես՝ Ցյուրիխի մանկավարժական համալսարանի հետ իրականացվել է «Better teaching for Better Learning» դրամաշնորհային ծրագիրը, Ցյուրիխի արվեստի համալսարանի հետ իրականացրած ծրագրին մասնակցել են ուսանողներ և դասախոսներ Ցյուրիխի արվեստների, Լուցերնի կիրառական գիտությունների և արվեստի, Շվեցարիայի կիրառական գիտությունների և արվեստի հյուսիս-արևմտյան համալսարաններից և ՀՊՄՀ-ից: «ԱՐՏԱՍ» հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում Մանկավարժականի և շվեյցարացի դասախոսները բուհի Աղավնաձորի ուսումնական բազայում վերապատրաստել են կերպարվեստ դասավանդող ուսուցիչներին:

Վերջին 4 տարիների ընթացքում ՀՊՄՀ-ում սովորել է 200 ուսանող Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Պարգևատրեցին հայագիտության նվիրյալին

Մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակի առթիվ, Գիտական խորհրդի որոշմամբ, համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, դոկտոր Բալինտ Կովաչին պարգևատրեց «Խաչատուր Աբովյան» մեդալով:

Բալինտ Կովաչը բուհի լավագույն բարեկամն է, իսկ Հունգարիայի Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարանը՝ լավագույն գործընկերը դեռևս 2016 թվականից: Երկու համալսարանների միջև գիտակրթական գործընկերության շրջանակում Պիտեր Պազմանի համալսարանում բացվել է հայագիտության ամբիոն, որի հետ կրթական ծրագրերով համագործակցում է ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետը: Հավելենք, որ հենց նրանց միջնորդությամբ Հայաստանին վերադարձվեց 44-օրյա պատերազմի ընթացքում գերի ընկած 5 հայ զինվոր:

Ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը վստահեցրեց՝ Հունգարիայի հետ կապը թեև սկզբում անհավանական էր թվում, այժմ վերածվել է ոչ միայն գիտակրթական համագործակցության. հայագիտության ամբիոնը դիվանագիտության շրջանակներում լուրջ քայլեր է անում՝ փաստելով, որ Հայաստանի հետ բարեկամությունն օրեցօր առավել սերտանում է՝ դուրս գալով կրթական շրջանակներից:

Բալինտ Կովաչը ոգևորված պատմում է, որ կարոտում է Հայաստանն ու հայերին, իսկ Մանկավարժական համալսարանի բարձրագույն պարգևը առավել պարտավորեցնող է:

Պարգևատրմանը ներկա էին բուհում միջազգային գիտաժողովի մասնակցող պատվիրակության անդամներ, Հունգարիայի Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր Շանդոր Օզեն և դոկտոր Կրիշտոֆ Սուրոմին:

Բալինտ Կովաչն ընդգծեց, որ պրոֆեսոր Օզենի դերը մեծ է հայագիտությամբ իր զբաղվելու գործում. նա խորհուրդ է տվել զբաղվել Տրանսիլվանիայի հայերի կյանքի ու գործի ուսումնասիրությամբ, ինչը հիմք է հանդիսացել գիտական պաշտպանության համար, ապա կապվել հայերի ու Հայաստանի հետ:

Բալինտ Կովաչն իր երախտագիտությունը հայտնեց

համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանին՝ հայագիտության ասպարեզում իր աշխատանքը գնահատելու համար՝ վստահեցնելով, որ առաջիկայում ավելի կընդլայնվեն գործակցային կապերը:

Նա ռեկտորին փոխանցեց Հունգարիայի կաթոլիկ համալսարանի ռեկտորի շնորհավորանքը բուհի հոբելյանի առթիվ:

Տարեգրության էջերից

Միսաք Արշամի ԴԱՎԹՅԱՆ

ՀՊՄՀ ռեկտոր 1999-2002, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ես հավատում եմ Մանկավարժական համալսարանի հաջողություններին

Լավ դասախոսն առաջին հերթին պետք է լինի լավ գիտնական ու հետազոտող. Նրա աշխատանքի հիմքը պետք է ունենա գիտական մոտեցում, որպեսզի խորն ըմբռնի յուրաքանչյուր փաստի էությունը: Դասախոսի մեջ պետք է մեկտեղվեն մարդկային բնավորության լավագույն հատկանիշներն ու լավ մասնագետ լինելը:

Բոլոր ժամանակներում կրթության վերափոխման հարցը եղել է օրակարգային: Այդ գործում Մանկավարժական համալսարանը՝ ի դեմս իր գիտնական-դասախոսների, միշտ էլ գտնվել է բարձրության վրա և կրթական փոփոխություններում ունեցել իր մեծ ավանդը:

Բուհի որակը որոշվում է նրանում աշխատող կադրերով. չէ՞ որ համաշխարհային ճանաչում վայելող համալսարաններն աչքի են ընկնում պրոֆեսորադասախոսական կազմի բարձր վարկանիշի շնորհիվ:

Ես հավատում եմ Մանկավարժական համալսարանի հետագա հաջողություններին. նա բոլոր ժամանակներում պատվով է կատարել իր առաքելությունը և պատրաստել մանկավարժների գրագետ սերունդ:

Արտուշ Ապրեսի ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ ռեկտոր 2002-2010

Ուսուցչի առաքելությունը նույնն է բոլոր ժամանակների համար

Իմ պաշտոնավարման տարիները Մանկավարժական համալսարանում նախ ես ինձ համար եմ կարևորում, որովհետև ծանոթացա և առնչվեցի մի հրաշալի կոլեկտիվի հետ, որտեղ և՛ բազմազանություն կար, և՛ բազմակարծություն, կար գիտակրթական համակարգի վերաբերյալ լավ մոտեցում: Եվ ամենակարևորը, որ այդ տարիները համընկան այն բարեփոխումների հետ, որն անհրաժեշտ էր կատարել: Մենք նախաձեռնեցինք մանկավարժական կրթության բարեփոխումները ոչ միայն Մանկավարժական համալսարանում, այլև հանրապետության մանկավարժական բուհերի հետ միասին:

Մենք բավականին բարդ իրավիճակի մեջ ենք դնում մեր ուսուցիչներին: Պետք է անկեղծ լինեմ և ասեմ, որ մենք քիչ ենք օգնում ուսուցչին, պահանջները շատ են: Կյանքը շատ արագ բարեփոխումներ է առաջադրում և այնքան էլ հեշտ չէ հարմարվել այդ զարգացումներին:

Այսօր շատ ավելի բարդ է, քան երբևիցե: Անկախությունը շատ լավ է, բայց ցավալի է գիտնականների, մտավորականների այսօրվա արտահոսքը, դժվար կենցաղը…

Բայց չպետք է մեղավորներ փնտրել, խնդիրն այն է, թե յուրաքանչյուրն իր տեղում ինչպես է աշխատում:

Մանկավարժական համալսարանի դասախոսներին ես կասեի՝ ինչքան էլ կյանքը դժվար է, դուք ամենակարևոր մարդիկ եք, ձեր պարտականությունները շարունակեք պատվով կատարել;

Ուզում եմ նաև շնորհավորել ուսանողներին և ասել՝ համոզված եղեք, որ դուք ճիշտ մասնագիտություն եք ընտրել: Դուք բոլորդ իրականացնում եք ազգօգուտ գործունեություն:

Սա մասնագիտություն է, որ սկիզբն է ամենի…

Ուսուցչի դերակատարությունը փոխվում է ժամանակի հետ և պետք է կարողանալ հարմարվել ժամանակի ռիթմին, բայց ուսուցչի սրբազան առաքելությունը մնում է նույնը բոլոր ժամանակների համար:

Գիրքական գրադարանը

1922 թ. Նոյեմբերի 7-ին հիմնադրվել է Մանկավարժական ինստիտուտի գրադարանը՝ 190 կտոր գրքով, առաջին գրադարանապետ է նշանակվել կարգալույծ քահանա **Մուշեղ Գասպարյանը**:

1923 թ. Էջմիածնի Մայր Աթոռի լուծարված մատենադարանից Մանկավարժականի գրադարան է փոխադրվել շուրջ 5000 միավոր հայերեն (այդ թվում մինչև 1800 թվականը տպագրված 28 հնատիպ), շուրջ 4000 միավոր ռուսերեն (այդ թվում մեկ օրինակ հնատիպ) գիրք և 15 անուն հայերեն օրագիր-ամսագիր և հանդես:

1933 թ.-ին Մանկավարժական ինստիտուտին հատկացված Խանջյան փողոցի վրա գտնվող նորակառույց շենքի նկուղային և առաջին հարկերում բացվել է գրադարանի № 1 գրապահոցը:

1934 թ. նոյեմբերին բացվել է Մանկավարժական ինստիտուտի Գյումրիի մասնաճյուղը: Նորաստեղծ գրադարանին է փոխանցվել շուրջ 2500 օրինակ գրականություն, այդ թվում՝ հնատիպ և հազվագյուտ գրքեր:

1934 թ. դեկտեմբերին Մանկավարժականի գրադարանի գրքային ֆոնդը հասել է 19032 միավորի:

1939 թ. գրադարանի տնօրեն է նշանակվել **Դուխիկ Մովսիսյանը**:

1960 թ. գրադարանի գրքային ֆոնդը հասել է 235.000 միավորի:

1961 թ. գրադարանի տնօրեն է նշանակվել Ադրինե Աբելյանը, որը 1965 թ. արժանացել է Վաստակավոր գրադարանավարի կոչման:

1967 թ. բացվել է Մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը: Գրադարանին է փոխանցվել շուրջ 3000 օրինակ գրականություն:

1970 թ. Բանասիրական ֆակուլտետի նկուղային հարկում բացվել է գրադարանի № 2 գրապահոցը:

1971 թ. հունվարին գրադարանի գրքային ֆոնդը հասել է 321.531 միավորի:

1979 թ. դեկտեմբերին Մանկավարժականի Գորիսի մասնաճյուղի գրադարանի գրքերի թիվը հասել է 40.000-ի:

1995 թ. Գրադարանի տնօրեն է նշանակվել **Տիգրան Հովհաննիսյանը**:

2000 թ. Մանկավարժականի գրադարանի տպագիր նյութերի ֆոնդը հասել է 500 հազար միավորի: Գրադարանին շնորհվել է գիտական գրադարանի կարգավիճակ, դասակարգման առաջին կարգ:

2009 թ. գրադարանի տնօրեն է նշանակվել **Տիգրան Պետրոսյանցը**:

2010 թ. ապրիլի 2–ին տեղի է ունեցել ՀՊՄՀ գիտական գրադարանի *mankavarzh.am* կայքի շնորհանդեսը:

2010 թ. բարձրահարկ շենքի 2-րդ հարկում բացվել է ՀՊՄՀ գիտական գրադարանի հումանիտար գրականության ընթերցասրահը:

2010 թ. դեկտեմբերի 22-ին առաջին անգամ կազմակերպվել է «***Լավագույն ընթերցող***» մրցույթը: Այն անցկացվել է մինչև 2020 թվականը:

2013 թ. մարտի 27-ին Բանասիրական ֆակուլտետի 3-րդ հարկում բացվել է բանասիրական գրականության ընթերցասրահ:

2013 թ. հոկտեմբերի 16-ին Պատմական ֆակուլտետի 4-րդ հարկում բացվել է պատմական գրականության ընթերցասրահ:

2014 թ. հունվարին հաստատվել է գիտական գրադարանի նոր կանոնադրությունը:

2014 թ. ապրիլի 14 –ին Գիտական գրադարանում հիմնվել է «*Հորեքշաբթի*» գրական ակումբը:

2014 թ. դեկտեմբերի 16–ին Համալսարանի բարձրահարկ մասնաշենքի 7-րդ հարկում բացվել է բնագիտական գրականության ընթերցասրահ:

2022 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՊՄՀ գիտական գրադարանի տպագիր նյութերի թիվը հասնում է 600 հազարի, որից գրքը՝ 513 հազար:

ՀՊՄՀ Գիտական գրադարանն այսօր գիտամշակութային կենտրոն է, ուր կազմակերպվում են տարաբնույթ հանդիպումներ անվանի շրջանավարտների, գրողների և տարբեր ոլորտների մարդկանց հետ:

Ալիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. ԱԲՈՎՅԱՆԻ անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

Մեր դասախոսներն իրենց գիտելիքներով ու նվիրումով ոգեշնչում էին մեզ

Պատմալեզվագրական ֆակուլտետը Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական բուհի նշանավոր ֆակուլտետներից էր: Մեր կուրսը, բաղկացած 50 հոգուց, ուներ հավասար քանակով աղջիկներ ու տղաներ: Բոլորին հետաքրքրում էր հնարավորինս առաջադեմ ուսանող լինելու հեռանկարը: Բնականաբար ուսման հինգ տարիների ընթացքում տարբեր առարկաների դասախոսներ էին մեզ ուսուցանում: Ֆակուլտետի դեկանը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտաշես Պողոսյանն էր, որին ուսանողները շատ սիրում էին: Նա ասում էր, որ ինքը ֆակուլտետում դասավանդելու համար ընտրում է լավագույն դասախոսների, և դա պետք է մեզ պարտավորեցներ: Եվ, իրոք, դա այդպես էր: Հայոց լեզվի տարբեր դասընթացները մեզ ավանդել են առաջնակարգ դասախոսներ՝ առաջին հերթին ոսկեշուրթ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Աբրահամյանը, որի լեզվաբանության ու գրաբարի դասերը հիշում եմ մինչև այսօր երախտագիտությամբ: Նրան ենք պարտական Եզնիկ Կողբացու և Ստեփանոս Օրբելյանի երկերի տաղանդավոր թարգմանությունները որպես իսկական գանձեր ունենալու համար:

Լեզվի ընտիր դասախոսներ էին պրոֆեսորներ Վաղարշակ Քոսյանը, Բոգդան Վերդյանը, Պետրոս Բեդիրյանը: Քոսյանը որպես հիանալի դեկան երկար տարիներ ղեկավարել է բանասիրական ֆակուլտետն ու հայոց լեզվի ամբիոնը: Իհարկե բարբառագիտություն ու պատմական քերականություն առարկաներն անմոռանալի էին ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի մատուցմամբ: Ես կարևորում եմ այդ երախտավորների անունների հիշատակումն իմ խոսքում:

Հայ գրականության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Վաչե Պարտիզունին մեծ նվիրումով կարդում էր հայ գրականության նոր շրջանի հեղինակներին: Նրան յուրօրինակ ձևով լրացնում էր պրոֆեսոր Արշալույս Բաբայանը: Վաչե Պարտիզունու «Վահան Տերյան» դասախոսությունը երևույթ էր, իսկ Բաբայանն այնպես էր ներկայացնում Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը, կարծես ինքը եղել էր Ավարայրի դեպքերի ականատեսն ու մասնակիցը:

Հայ հին և միջնադարյան գրականությունը դասավանդում էր դոցենտ Աշոտ Մկրտչյանը, որի մոտ «գերազանց» ստանալն իսկական խիզախում էր: «Գերազանց» ստանալը բարդագույն երևույթ էր պրոֆեսոր Պարույր Սահակյանի մոտ, որն ավանդում էր գրականագիտություն և ռուս գրականություն առարկաները: Նրա դասախոսությունները հիանալի էին:

Հունահռոմեական գրականությունն ավանդում էր այդ առարկաների դասագրքերի հեղինակ, ազնվական տեսքով Առաքել Առաքելյանը, որը նաև հայ միջնադարի հայ մատենագիրների հիանալի գիտակ էր և ուներ նրանց ներկայացնող արժեքավոր գրքեր: Եվրոպական գրականությունը իսկական կախարդիչ խոսքով ներկայացնում էր պրոֆեսոր Սողոմոն Սողոմոնյանը, որին հատուկ մեր կուրսի համար հրավիրել էր դեկան Պողոսյանը:

Պատմության անմոռանալի դասախոսներ էին ազնվականի տեսքով պրոֆեսորներ Զավեն Գրիգորյանն ու Սուրեն Հակոբյանը:

Հրաշք դասախոս էր բոլոր ուսանողների սիրելի ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմաբան, բնագետ, սայաթնովագետ Մորուս Հասրաթյանը, որը եղել էր աշխարհահռչակ Նիկողայոս Մառի ու Հովսեփ Օրբելու ասպիրանտը Լենինգրադում ու հայագիտության մեջ շարունակում էր նրանց գործը:

Անմոռանալի են քաղաքատնտեսության դասախոս Վազգեն Աղուզումցյանի դասախոսությունները, որը որոշ տարիներ եղել էր նաև մանկավարժական ինստիտուտի ռեկտորը:

Սիրված դասախոսներից էին քաղաքագետներ Աշոտ Փարեմուզյանը, երկու անգամ ինստիտուտի ռեկտորի պաշտոնը գլխավորած, ու Կուլտուրայի ֆակուլտետի հիմնադիր, եզակի հումորի ու բազմագիտակության տեր Կառլեն Միրզախանյանը:

Իմ ուսումնառության տարիներին բուհի ռեկտորը հայ ժողովրդի պատմության դասախոս Վարդգես Համազասպյանն էր, որն ուներ կազմակերպչական բարձր ունակություններ և մտահոգ էր բուհի առաջընթացով:

Այս սեղմ խոսքում հիշել բոլոր երախտավորներին անհնար է, սակայն փաստ է, որ վերոհիշյալները մեծ ավանդ են ունեցել մանկավարժական մայր բուհում առաջնակարգ շրջանավարտներ պատրաստելու ազգապահպան ու մարդասիրական կարևորագույն գործում:

Քարի՞ պարեդարձ, սիրելի՛ Մանկավարժական

Այս տարի լրանում է քո գործունեության 100-ամյակը: Եվ ես՝ թվով անհամրելիերորդ շրջանավարտդ, ի դեմս սփյուռքում դասավանդող քո հազարավոր շրջանավարտների, սիրով շնորհավորում եմ քե՛զ և մանկավարժական համակազմին, այսօրվա՛ և գալիք ուսանողներիդ հոբելյանական տարեդարձիդ առթիվ:

Երկար և բեղմնավոր ճանապարհ ես անցել. կրթել հայ և օտարազգի երիտասարդների, հաղորդել նրանց ակադեմիական և արդի գիտելիքներ ու հմտություններ, ճանապարհ հարթել դեպի մանկավարժի դժվարին ու անչափ կարևոր առաքելության տաճար՝ դպրոց:

Իմ հարազա՛տ համալսարան, իմ սիրելի ու անմոռանալի դասախոսներ՝ ավագ ընկերներ, ձեր անմիջական մասնակցությամբ ու հոգածությամբ հյուսվում է յուրաքանչյուր շրջանավարտի մասնագիտական, ինչու չէ, նաև անձնական կյանքը, ձևավորվում են համոզմունքներ, աշխարհայացք, դառնում ապրելակերպ, ազգային մտածողություն: Եվ կարևոր չէ, թե որտեղ է բնակվում և արարում քո շրջանավարտը, նա շարունակում է լինել Մանկավարժական համալսարանի ջահակիրը:

Իմ անցած մանկավարժական ուղին սկսվեց 1995 թվականին, երբ ես ոտք դրեցի Մանկավարժական ինստիտուտ (այդ տարիներին ինստիտուտ էր): Խանդավառված ուսուցիչ դառնալու ցանկությամբ՝ ես ամենայն լրջությամբ էի վերաբերվում իմ կրթությանը: Ականջալուր էի մեր հմուտ դասախոսների խորհուրդներին: Ու հենց այդ տարիներին ինձ համար ուսուցչի վառ ու օրինակելի կերպար դարձավ իմ դասախոս տիկին Զուլիետա Գյուլամիրյանը: Իր օրինակին հետևելով և իր գիտական ղեկավարությամբ ես գերազանցությամբ ավարտեցի համալսարանի Տարրական ուսուցման մեթոդիկայի և մանկավարժության ֆակուլտետը, ապա՝ ասպիրանտուրան: Ասպիրանտական տարիներին հնարավորություն ունեցա գործնական ժամեր վարել Հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի ամբիոնում: Երանելի՜ տարիներ… Որքա՜ն բան սովորեցի այդ տարիներին: Երբեք չեմ մոռանա տիկին Գյուլամիրյանի խոսքերը. «Օրվա 24 ժամն ինձ չի բավարարում…Այնքա՜ն գործ կա անելու, այնքա՜ն բան կա ստեղծելու…»:

Բուհն ավարտելուց հետո դասավանդել եմ Երևանի տարբեր կրթօջախներում:

Անմոռանալի, բովանդակալից և արգասաբեր մանկավարժական գործունեության տարիներ, որոնց մասին կարելի է անվերջ խոսել:

2014 թ. ՀՀ Կրթության և գիտության նախարարության և հայ առաքելական եկեղեցու կողմից անցկացված «Լավագույն առարկայական մասնագետ» համապետական մրցույթում պատվավոր 3-րդ տեղը գրավելն ու Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ պատվոգրի արժանանալն ինձ համար մեծ պատիվ էր:

2016 թվականին ընտանիքով մշտական բնակության տեղափոխվեցինք Ռուսաստանի Դաշնություն, և աշխատանքային գործունեությունս թևակոխեց նոր փուլ: Ես դարձա սփյուռքի ուսուցիչ:

Եթե հայրենիքի դպրոցում դասավանդելը մասնագիտական գործունեություն էր, ապա սփյուռքում այն ձեռք բերեց գաղափարական, հայապահպան նշանակություն: Նովոռոսիյսկ քաղաքում «Լույս» հայկական համայնքի աջակցությամբ սկսեցի հայերեն դասավանդել Ռանսկայա ավանի № 24 միջնակարգ դպրոցում: Շուրջս հավաքեցի հայ երեխաներին, նրանց ծնողներին: Մեր փոքրիկ դասարանը դարձրի հայկական անկյուն, ուր երեխաներն այսօր խոսում են հայերեն, գրում ու կարդում են մայրենի լեզվով, կազմակերպում գրական ցերեկույթներ, նշում մեր ազգային տոները, մասնակցում հայրենագիտական օլիմպիադաների, համահայկական նկարչական, ասմունքի մրցույթների, ճանաչվում հաղթող:

Ունենալով սփյուռքում դասավանդման 6-ամյա աշխատանքային փորձ՝ ձեռնամուխ եղա 2-րդ դասարանի «Հայաստանի կռունկ» դասագրքի և աշխատանքային տետրի ստեղծմանը: Ստեղծեցի մի շարք ուսուցողական խաղեր՝ մայրենի լեզվի, բանավոր խոսքի, ժողովրդական բանահյուսության ուսուցման համար: Կազմեցի 70-ից ավելի ավանդապատումների հավաքածու՝ մայրենիի դասերը հետաքրքիր և ուսանելի դարձնելու համար:

Կարևորելով հայերենից աշակերտների գիտելիքների ինքնաստուգման անհրաժեշտությունը, ինչպես նաև երեխաների ներգրավումը առարկայական օլիմպիադայում, համագործակցելով «Այբ» կրթական հիմնադրամի հետ՝ կարողացա օժանդակել 2019 թվականին «Մեղու» հայերենի միջազգային օլիմպիադայի անցկացմանը Կրասնոդարի երկրամասում՝ ներգրավելով 60-ից ավելի երեխաների: Եվ արդեն 3 տարի շարունակ իմ աշակերտները մասնակցում և հաղթող են ճանաչվում «Մեղու» օլիմպիադայում՝ արժանանալով հատուկ մրցանակների:

Այս տարի առաջին անգամ Ռուսաստանի հայերի միության Կրասնոդարի երկրամասի բաժանմունքի կողմից անցկացվեցին «Տարվա ուսուցիչ» և «Տարվա աշակերտ» մրցույթները, որոնց մասնակցեցի ես իմ աշակերտների հետ: «Տարվա աշակերտ» մրցույթին ներկայացված իմ 5 աշակերտներն էլ ճանաչվեցին հաղթող, իսկ ես ճանաչվեցի երկրամասում «Լավագույն ուսուցիչ»:

Մասնակցում եմ համառուսաստանյան մրցույթների՝ ներկայացնելով մանկավարժամեթոդական աշխատանքներս՝ նպատակ հետապնդելով ռուսախոս հանրությանը ներկայացնել հայկական մշակույթը, արվեստը, գիրն ու գրականությունը: Միջազգային մրցույթին ներկայացրած «Հայոց այբուբենը համաշխարհային մշակույթում» իմ հետազոտական մանկավարժական նախագիծը ճանաչվեց հաղթող և արժանացավ «Գրան Պրի» մրցանակի:

Հիմա, երբ օրս բազմազբաղ է, և առօրյաս եռում է ստեղծագործական աշխատանքով, երբ բացի ուսուցչությունից կազմում եմ ուսումնաօժանդակ ձեռնարկներ, աշակերտներիս հետ մասնակցում եմ մրցույթների, վայելում նրանց հետ հաղթանակների բերկրանքը, կյանքի կոչում հետաքրքիր նախագծեր, երբեմն ինքս ինձ ասում եմ. «Օրվա 24 ժամն ինձ չի բավարարում…Այնքա՜ն գործ կա անելու, այնքա՜ն բան կա ստեղծելու…»:

Եվ այսօր ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել իմ հարազատ բուհին, իմ սիրելի ու թանկագին դասախոսներին այն գիտելիքների, գաղափարների, կամքի ու ձգտումների համար, որոնց կրողն եմ դարձել:

Արև ԲԱԼԱՅԱՆ
Կրասնոդարի երկրամաս, ք. Նովոռոսիյսկ
Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Այս տարի լրանում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակը: Հոբելյանական պատկառելի մի ժամանակահատված, որի մշակութային միջակայքը մեկ դարով է չափվում: Մեկ դար՝ լեցուն կայացման, կազմակերպման դժվարություններով, նվաճումների բերկրանքով, զարգացման ընթացքի վայրիվերումներով, վերակազմություններով, փոփոխումներով՝ այն ամենով, ինչը բնորոշ է զարգացող օրգանիզմին, զարգացում ապրող, բայց երբեք չլճացող, իր ընթացքի մեջ կանգ չառնող երևույթին: Ինչպես և հարիր է յուրաքանչյուր կրթական օջախի՝ Մանկավարժական բուհը մշտապես քայլել և քայլում է ժամանակին համընթաց՝ ներքին մղումով ենթարկվելով փոփոխությունների, արձագանքելով նորարարություններին՝ հաճախ նույնիսկ առաջատար լինելով մշակութային առաջարկներում, ազգային ոգու կերտման և պահպանման հրամայականում: Եվ սա պատահական չէ, քանզի Մանկավարժականի պատերի ներքո ջերմություն, կորով և գիտելիք է ստացել և ստանում հիմնականում գյուղական միջավայրից սերած պատանեկությունը, որը հղկման, կրթվելու կարիք ունի, միևնույն ժամանակ, կամա թե ակամա, իր ուսերի վրա է կրում ազգի տեսակը պահպանելու դժվարին առաքելությունը: Կրթվելու, կրթություն և լույս սփռելու, բայց երբեք ոչ ծուլվելու և տեսակը փոխելու առաքելությունը: Ահա այս դժվարին խնդիրն է միշտ ծառացած եղել բարձրագույն մանկավարժական հաստատության առջև, խնդիր որն առավել արդիական է ներկայիս բարդագույն ժամանակահատվածում:

Եվ պատահական չէ, որ մանկավարժական բարձրագույն կրթօջախում դասավանդել և դասավանդում են գիտության, մշակույթի և արվեստի բնագավառում ազգի երևելիները: Խոսքը Գեղարվեստական կրթության ֆակուլտետում իրենց ավանդն ունեցած մշակույթի հայտնի գործիչների մասին է, անհատների, որոնք ճաշակ և հմտություն են փոխանցել սերունդներին, գեղեցիկը տեսնելու, գնահատելու բացառիկ կարողություններ, նաև՝ սեր մարդկանց և բնության հանդեպ:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետը պատկերավոր արտահայտությամբ ապրեց իր Ոսկե դարը, այն շրջանը, երբ այստեղ իրենց ավանդը ներդրեցին հանրապետության մեծանուն արվեստագետներն ու արվեստաբանները, որոնց հետնորդներն ու սաները ներկայիս ֆակուլտետի լավագույն մասնագետներն են:

Փորձենք Մեծ երախտավորների շարքից մի քանիսին առանձնացնել՝ հղումներ կատարելով ֆակուլտետի և արվեստի ամբիոնի բազմավաստակ մասնագետ ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի գրառումներին: Ի դեպ նշենք, որ հարգարժան դոկտոր, պրոֆեսորի նախաձեռնությամբ 2017 թվականից համալսարանի «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի էջերում պարբերաբար լույս են ընծայվել ֆակուլտետի վաստակաշատ մանկավարժ-նկարիչների մասին ընդարձակ հոդվածներ: Ահա Հրավարդ Հակոբյանի մուտքի խոսքը. «Տարիներ շարունակ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Կուլտուրայի և Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ղեկավարները ուսանողներին դասավանդելու համար հրավիրել են Հայաստանում մեծ ճանաչում ունեցող արվեստագետների, ովքեր սերունդներ են կրթել ու ճաշակ ձևավորել. Ղուկաս Չուբարյան, Էդուարդ Իսաբեկյան, Հովհաննես Զարդարյան, Լևոն Կոջոյան, Աշոտ Մելքոնյան»:

ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանը 20-րդ դարի հայ կերպարվեստի դասականներից է, ով 1965-66 թվականներին ղեկավարել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Գունանկարի ամբիոնը, նա մեծ ավանդ ունի հայ գեղանկարչության պատմական ժանրի զարգացման գործում: Սուրենյանցից հետո, թերևս, պատմական ժանրի ամենացայտուն դրսևորումները եղան Իսաբեկյանի արվեստում: Պատմական ժանրի նրա ստեղծագործություններից են՝ «Պատասխան Հազկերտին», «Դավիթ Բեկ», «Ավարայրի ճակատամարտը», «Արտավազդը սենատում» մեծադիր կտավները: Եվ հենց այս հայրենասիրական տրամադրությամբ է նկարիչը մուտք գործել լսարան-արվեստանոց, վարակելով ապագա նկարիչներին ազգային ոգով:

ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Հովհաննես Զարդարյանն աշխատել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում 1967-1982 թվականներին, իր գործունեությամբ խորապես իմաստավորել է ֆակուլտետի գեղագիտական կյանքը: 20-րդ դարի հայ կերպարվեստի պատմության մեջ Զարդարյանն այն երախտավորներից է, ով իր ուրույն տեղն ունի ոչ միայն հայ, այլև համաշխարհային գեղանկարչության մեջ:

Նկարչին մեծ ճանաչում բերեց 1956 թվականին ստեղծած «Գարուն» աշխատանքը, որին տարիներ հետո կարծես արձագանքեց մեկ այլ կտավ, որը կոչվեց «Ձգտում» (1960): Հետագա գեղանկարչական լուծումներում Զարդարյանն առանձնակի շեշտադրման արժանացրեց ստեղծագործությունների վառ գունային լուծումները՝ հագեցած լույսով, և հենց զարդարյանական լավատեսությամբ: Զարդարյանն առաջին հերթին գույնի վարպետ է և հենց գույնով վարակեց ուսանողներին:

Զարդարյանից մեկ տարի ավելի վաղ՝ 1967 թվականին, Մանկավարժական ինստիտուտ ոտք դրեց քանդակագործության ասպարեզի անժխտելի մեծություն ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Ղուկաս Չուբարյանը, ով աշխատեց բուհում մինչև կյանքի վերջ (2009)՝ ղեկավարելով Գծանկարի ամբիոնը: Մանկավարժական գործունեության երկարակեցությունն առաջին հերթին բացատրվում է այն հանգամանքով, որ քանդակագործական բացառիկ տաղանդ ունենալուն զուգահեռ Չուբարյանն իր խառնվածքով և նվիրումով նաև փայլուն մանկավարժ էր:

Բավական է նշել Երևանում հաստատված մոնումենտալ չուբարյանական քանդակները, որպեսզի պարզ դառնա քանդակագործ-նկարչի մեծությունը և հանրային նշանակությունը. Մատենադարանի առջևի «Մեսրոպ Մաշտոց և Կորյունը» արձանախումբը, Մխիթար Գոշը, Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի հարթակում տեղադրված Ալ. Սպենդարյանի արձանը և այլք:

Ղուկաս Չուբարյանն իր պլաստիկ մտածողությամբ վարակեց Մանկավարժականի սաներին, որոնցից շատերը հետագայում դարձան անվանի քանդակագործներ:

Մեր բուհում կրթության գործնական ուսուցումը լիարժեք չէր լինի և մեր կողմից ֆակուլտետի նկարագիրը թերի կմնար, եթե չներկայացնեինք արվեստաբաններին, մասնագետների, որոնք գրեթե իրենց ողջ կյանքը նվիրեցին երիտասարդների հղկմանը՝ հարստացնելով գիտելիքները, ձևավորելով նրանց ինքնությունը, կերտելով նրանց քաղաքացու կերպարը: Ավագ սերնդի նշված արվեստաբանները երկուսն են, և երկուսն էլ, հուրախություն մեզ, ողջ և առողջ են:

Մերի Երզնկյան՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ով մի քանի տասնյակ արվեստաբանական և մշակութաբանական հոդվածների հեղինակ է և 1970 թվականից մինչ 2016 թվականը դասավանդել է ֆակուլտետում: Արվեստաբանը տեսաբանական մտքի լայն ընդգրկման արդյունքում, նաև ռուսաց լեզվին գերազանց տիրապետելու շնորհիվ կարողացել է լուսաբանել հայ կերպարվեստը ռուսական արվեստաբանական միջավայրում, հոդվածներ տպագրելով միութենական հեղինակավոր պարբերականներում՝ «Искусство», «Творчество», հեղինակել է նաև հինգ մասնագիտական բովանդակությամբ գրքեր:

Մերի Երզնկյանն արտասահմանյան արվեստի փայլուն գիտակ է, նրա թողած հետագիծը զարմանալիորեն կամ էլ օրինաչափ կերպով կենսունակ է մինչև այսօր: Չէ՞ որ համալսարանում ներկայիս դասախոսող գրեթե բոլոր դասախոսները նրա ուսանողներն են եղել:

Երախտավորների մասին մեր գրվածքը ցանկանում ենք ավարտել այնտեղ, որտեղից սկսեցինք՝ Հրավարդ Հակոբյանի բեղմնավոր գիտական և մանկավարժական գործունեության բնութագրմամբ:

Հայ իրականության մեջ առաջին արվեստագիտության դոկտորն է Հրավարդ Հակոբյանը, ում նաև 1992 թվականին Ռուսաստանի Դաշնության բարձրագույն կրթության և գիտության նախարարության գիտական աստիճանների որակավորման հանձնաժողովի կողմից շնորհվել է պրոֆեսորի կոչում: Տասնամյակներ շարունակ միջնադարագետ-հայագետը զբաղվել է պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի և հարակից շրջանների ձեռագիր-մատյանների ուսումնասիրությամբ, որի հանրագումարը դարձան ՀԽՍՀ ԳԱ հրատարակչության կողմից լույս ընծայված «Վասպուրականի մանրանկարչությունը» երկհատոր աշխատությունը և «Миниатюра Васпу-ракана (XIII-XV вв.)» մենագրությունը, ինչպես նաև «Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում» ալբոմն ու գիտական բազմաթիվ հոդվածները:

Գիտական բեղմնավոր աշխատանքին զուգահեռ՝ Հ. Հակոբյանը զբաղվել է ակտիվ մանկավարժական գործունեությամբ: 1989-ին նա համատեղության կարգով հրավիրվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, նախ՝ որպես ամբիոնի վարիչ, ապա 2000-ից՝ ամբիոնի պրոֆեսոր: Ուսանող երիտասարդության համար անվանի արվեստաբանը հրատարակեց «Հայ արվեստի աշխարհում», «Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց ծրագիրը» և իր բնագավառում աննախադեպ «Կերպարվեստը հայոց կրթարաններում» արվեստի ուսուցման պատմության առաջին հատորը:

Զգալի է գիտական-մանկավարժի վաստակը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական ատենախոսություններ արվեստաբանության և մանկավարժության գծով:

Թերևս չհաջողվեց ներկայացնել բուհի զարգացման գործում իրենց ավանդը ներդրած բոլոր արվեստագետներին, այդուհանդերձ ֆակուլտետը պահում և բարձր գնահատականի է արժանացնում իր երախտավորներին, ասվածի ապացույցը վերջին տարիներին Ղուկաս Չուբարյանի, Հովհաննես Զարդարյանի, Սուրեն Սաֆարյանի անուններով կոչված արվեստանոց-լսարաններն են, ինչպես նաև պատկերասրահ-լսարանները, որոնցում զետեղված են մեր ֆակուլտետում դասավանդած և դասավանդող արվեստագետների աշխատանքները:

Մեր խոնարհումը արվեստի Մեծերին:

Վարդիթեր ԳԱՄԱՂԵԼՅԱՆ
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ

Մեկդարյա բուհն իմ աչքերով ...

Մանկավարժ դառնալու որոշումս հստակ էր, կողքից հնչած կարծիքները՝ բազմազան:

Ի վերջո որոշեցի պարզապես չլսել ոչ ոքի ու հետևել սրտիս ձայնին, որն ինձ ոչ միայն հուսախաբ չարեց, այլ նաև ուղղորդեց այն հաստատություն, որը դարձավ նպատակներիս իրականացման լավագույն սկզբնակետը: Ուսանողական խորհրդի միջոցով սկսեցի ակտիվ գործունեություն ծավալել, և յուրաքանչյուր հարցում իմ փոքրիկ ներդրումն ունենալն ավելի ամուր հիմք հանդիսացավ առավել արժևորելու մեկդարյա Մանկավարժականը:

Այս չորս տարիներն օգնեցին հասկանալ, որ Մանկավարժականը պարզապես ուսումնական հաստատություն չէ, այլ ամուր երկրի կարևոր սկզբնակետ և ուսումնական գործընթացի շարունակականության պահպանման անբաժան օղակ:

Այսօր պատիվ ունեմ լինելու հարյուրամյա բուհի ուսանող: Մի բուհի, որի սաները կերտում են սերունդների ապագան, որի պատերի ներսում ձևավորվում են մանկավարժական լավագույն որակները, որտեղ սովորող ուսանողն ունի հրաշալի մանկավարժ դառնալու բոլոր հնարավորությունները, որտեղ պաշտպանված են ուսանողների շահերն ու չկա ատելության կամ անհանդուրժողականության մթնոլորտ, որի շրջանավարտները կերտում են ապագա բժիշկներին, երաժիշտներին, թարգմանիչներին... որտեղ սովորեցնում են սովորեցնել՝ արդեն հարյուր տարի:

Այսպիսով, ամեն բան սկսվում է դպրոցից, որի արժանի կադրերի ապահովման աշխատանքի բացակայությունը կբերի իրական քաոսի, դե, իսկ Մանկավարժական համալսարանն ապահովում է երկրի ներկա և ապագա մանկավարժների պատրաստումը:

Ահա ինչու մանկավարժ դառնալու որոշումս հստակ էր: Ես սովորում եմ Մանկավարժական համալսարանում, և հպարտորեն եմ կրում ապագա մանկավարժի անունը:

Իմ համալսարանը մեկդարյա պատմություն ունի, և ես նրա մի մասնիկն եմ:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

Մանկավարժական համալսարանի պատմության թանգարանը

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյա պատմությունը ներկայացված է համալսարանի թագարանում, որն այս տարի նշում է իր 10-ամյակը: Թանգարանի հիմնական ցուցադրության պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2012 թվականի նոյեմբերի 19-ին՝ Համալսարանի 90-ամյակի տոնակատարությունների շրջանակում:

Մինչև 2012թ. ավարտը թանգարանն ունեցավ ավելի քան 7000 այցելու:

Բուհի ղեկավարության կողմից որոշում ընդունվեց ստեղծել թանգարան, որի նպատակը կլինի՝ ուսանողներին ծանոթացնել համալսարանի հարուստ պատմությանն ու ավանդույթներին:

Բուհի աշխատակազմը կարճ ժամանակահատվածում կազմեց ապագա թանգարանի թեմատիկ և ցուցադրական պլանները և նկարիչ ձևավորող Հայկազ Քոչարի, ինչպես նաև Մանկավարժական համալսարանի Թանգարանագիտության ամբիոնի օժանդակությամբ ստեղծեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանը:

Թանգարանն ակտիվ գործող կրթամշակութային կենտրոն է, որն իրականացնում է տարաբնույթ ծրագրեր ու միջոցառումներ տարբեր տարիքի լսարանների համար, կազմակերպում ժամանակավոր ցուցահանդեսներ, ակտիվորեն համագործակցում նման գործունեություն ծավալող մի շարք հաստատությունների հետ:

Ժամանակի պահանջներին համընթաց՝ թանգարանը համալրվել ու համալրվում է տեխնիկական նորամուծություններով (հպազգայուն էկրան, 3D անիմացիա, էկրաններ): Այս համատեքստում կարևոր է նշել թանգարանի համագործակցությունը IZI travel միջազգային կազմակերպության հետ, որի արդյունքում 2014 թ.-ին թանգարանը Հայաստանում առաջինը գործարկեց IZI.travel ծառայության աուդիոգիդ անվճար ծրագիրը: Հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող աշխատանքների կարևորությունն ու առաջնահերթությունը, ինչպես նաև օգտվելով ծրագրի ընձեռած լայն հնարավորություններից, թանգարանի էքսկուրսիոն տեքստը հասանելի է նաև լսողության և խոսքի խանգարման խնդիրներ ունեցող մարդկանց համար՝ սուրդոտեքստերի միջոցով: Ծրագիրը կարևորվում է նաև տիֆլոմանկավարժության տեսանկյունից, քանի որ էքսկուրսիոն տեքստը՝ աուդիո տարբերակով, թանգարանում առանց հատուկ միջոցների ու հարմարությունների ներդրման, հասանելի է դառնում նաև այս խմբի այցելուների համար:

Իր գործունեության համակարգում մանկավարժական համալսարանի թանգարանը մեծ տեղ է հատկացնում հատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող ծրագրերին ու աշխատանքներին:

Թանգարանը հասանելի է Facebook սոցիալական ցանցում (ASPU Museum-ՀՊՄՀ Թանգարան), ունի կայքէջ (https://aspu.am/hy/page/tangaran/), որի միջոցով իրականացվում է, նաև, վիրտուալ շրջայց թանգարանում:

Թանգարանը չի սահմանափակվում միայն ներթանգարանային աուդիոգիդի կիրառմամբ, ստեղծվել է նաև «Զբոսանք Երևանի փողոցներով» խորագիրը կրող զբոսաշրջային աուդիոգիդ:

Ամեն տարի թանգարան են այցելում հազարավոր այցելուներ, որոնք իրենց տպավորություններն արձանագրում են այցելությունների գրքում:

ՀՊՄՀ թանգարանը սիրով հրավիրում է ծանոթանալու համալսարանաի 100-ամյա պատմությանը:

Համընդհանուր ներառականության համատեքստում

100–ամյա պատմություն ունեցող Մանկավարժական համալսարանում Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը Հայաստանի Հանրապետության միակ բուհն է, որը պատրաստում է լոգոպեդ, էրգոթերապևտ, արտթերապևտ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենոմանկավարժ, տիֆլոմանկավարժ, հատուկ մանկավարժ, հատուկ հոգեբան որակավորմամբ մասնագետներ:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և շրջանավարտների գերակշիռ մասն աշխատում է ներառական կրթություն իրականացնող հանրակրթական և հատուկ դպրոցներում, նախադպրոցական ուսումնական հաստատություններում, պոլիկլինիկաներում, հիվանդանոցների տարբեր բաժանմունքներում, վերականգնողական կենտրոններում, մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում:

Ֆակուլտետի գիտագործնական, գիտահետազոտական և միջազգային գործունեությունը վերաբերում է համընդհանուր հատուկ և ներառական կրթությանը:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը մշտապես կարևորում է տեղական և միջազգային գիտաժողովները, աշխատաժողովները, սեմինարները, կլոր-սեղան քննարկումները կազմակերպումն ու մասնակցությունը: Մասնավորապես ֆակուլտետն իր յուրովի մասնակցությունն է ցուցաբերել էրազմուս +-ի, UNICEF –ի, Caritas հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվող միջազգային ծրագրերին: Կարևոր ձեռքբերումներից են ԱՄՆ «Պերկինս» միջազգային կազմակերպության մեկամյա մոդուլային վերապատրաստման ծրագիրը, որի արդյունքում մշակվել և ֆակուլտետում ներդրվել է ուսումնական ծրագրերով նախատեսված ընտրովի դասընթաց: Միջազգային համագործակցության հաջողված փորձերից է 2014 թվականից մեկնարկած ՌԴ Մոսկվայի «Соединение» չտեսնող-չլսողների աջակցության հիմնադրամ ակադեմիայի կողմից «Наставники и ученики» նախագիծը, որի շրջանակներում 2 տարվա կտրվածքով (տարեկան 3 անգամ) ուսանողն իր ղեկավարի հետ համատեղ ՌԴ-ի տարբեր համալսարաններում ներկայացրել է իր կատարած հետազոտական աշխատանքը:

Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում կարևորվել է ֆակուլտետի և Չեխիայի Պարտուբիցե համալսարանի, Բուլղարիայի Անգել Կանչևի անվան համալսարանի, Իտալիայի Մաչերատայի համալսարանի, Ֆինլանդիայի Օուլու համալսարանի առաջատար մասնագետների հետ փոխադարձ այցելությունների կազմակերպումը:

ՀՊՄՀ–ի և Մինեսոտայի համալսարանների համագործակցության արդյունքում լույս է տեսել «Ներառական կրթության ռազմավարությունը» խորագրով դասագիրքը, որը նախատեսված է դասախոսների, ներկա և ապագա մանկավարժների, կրթական, աջակցող ծառայություններ մատուցողների, հոգեբանամանկավարժական աջակցություն տրամադրող բազմամասնագիտական թիմերի անդամների, ծնողների համար:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ

Մանկավարժական համալսարանի № 57 հիմնական դպրոցը

№ 57 դպրոցը հիմնադրվել է 1947 թվական Երևանում: Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Օնիկ Վաթյանը, Սուսաննա Խաչատրյանը, իսկ 2014 թվականից առ այսօր՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Տողանյանը:

1973-1974 ուստարում դպրոցը տեղափոխվել է Ագաթանգեղոսի 7ա հասցեում գտնվող նորակառույց տիպային շենք և գործել այդ վայրում մինչև 2018 թ:

1995 թվականին դպրոցն անվանակոչվել է Վահան Թոթովենցի անունով:

2013 թվականի հունվարից դպրոցը դարձել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ստորաբաժանում և մինչ օրս գործում է համալսարանին կից:

2018 թ.-ից դպրոցը տեղափոխվել է Սիմոն Վրացյան 75 հասցեում գտնվող մասնաշենք:

2022-2023 ուստարում դպրոցի 1-9-րդ դասարաններում սովորում է 502 աշակերտ:

Այստեղ իրենց մանկավարժական պրակտիկան են անցկացնում ՀՊՄՀ տարբեր ֆակուլտետների ուսանողները:

Աշխատակազմը ջանք ու եռանդ չի խնայում կրթության բարձր որակ ապահովելու և սովորողների համար կրթական բարենպաստ միջավայր ստեղծելու ուղղությամբ:

Դպրոցում հաջողությամբ գործում է երկարօրյա երեք խումբ, առարկայական և սպորտային խմբակներ:

Դպրոցի երգչախումբը, որը ստեղծվել է 2014 թվականին, մասնակցել է 3 համահայկական փառատոնի և տարբեր միջոցառումների:

Դպրոցն աչքի է ընկնում հետաքրքիր ավանդույթներով, գեղեցիկ միջոցառումների կազմակերպմամբ:

Հոգատարություն ու նվիրում

Էմմա Ղազարյանը 2013-2019 թթ. սովորել և ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» բաժնում: Ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքները գործնականում ամրապնդել է Հայաստանի տարբեր գրադարաններում, այդ թվում՝ Ամերիկյան համալսարանի «Փափազյան» գրադարանում, Ազգային արխիվում:

«Դասախոսական հմուտ և բարեխիղճ անձնակազմի կողմից ստացել եմ մասնագիտական բարձր գիտելիքներ, որոնք այժմ կիրառում եմ իմ աշխատավայրում»,-հպարտությամբ նշում է համալսարանի շրջանավարտը:

Ներկայումս որպես գլխավոր մատենագետ նա աշխատում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում: Սիրում է իր աշխատանքը, որը պահանջում է հոգատարություն ու նվիրում:

Կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտը հպարտությամբ է նշում, որ համալսարանի շրջանավարտն է և ամեն օր փորձում է իր աշխատանքով բարձր պահել Խաչատուր Աբովյանի անունը կրող բարձրագույն կրթօջախի անունը:

«Ողջ ծաղկաբույլս քեզ, իմ 100-ամյա դպրանոց»

«Ուսուցիչ լինելը տիեզերական զգացողություն է, որովհետև Ուսուցիչ բառը կրել են Քրիստոսը, Մաշտոցը, Նարեկացին, Խաչատուր Աբովյանը, Աղայանը և տասնյակ հազարավոր մանկավարժներ, ուսուցիչներ, որոնք հասարակության կրթողն ու դաստիարակողն են եղել: Ե՛վ ուսուցիչները, և՛ ուսուցչապետը ամենալավ մասնագիտության կրողներն են»,-ասաց գեղանկարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը, ով հերթական ցուցահանդեսն էր բացել Մանկավարժական համալսարանի ռեկտորատի սրահում՝ «Ողջ ծաղկաբույլս քեզ, իմ 100-ամյա դպրանոց» խորագրով:

Մանկավարժական համալսարանի սրահում ծաղիկների ու գույների հրավառություն էր: Գեղանկարիչը հարազատ կրթօջախի հոբելյանը որոշել էր շնորհավորել իր ծաղկային կտավների միջոցով: Բուհ, ուր ոտք է դնում արդեն 51 տարի: Քիչ է ասել՝ Մանկավարժականի հետ կեսդարյա մտերմությունն ավելի քան առինքնող է, երկուստեք ջերմացնող զգացողություն:

48 ստեղծագործություն, որոնց մեջ բնության շոյող ժպիտներն են՝ արևածաղիկներ ու ջրաշուշաններ, երիցուկներ ու կակաչներ, ճարճատուկներ ու յուղածաղիկներ, անմոռուկներ ու…. Լեմս Ներսիսյանը դրանք վրձնել է Լոռիում ու Սյունիքում, Աղավնաձորում ու Հայաստանի ամենաթաքուն, նուրբ անկյուններում: Նկարչի ծաղկե կտավներից աչք են շոյում Հայաստան աշխարհի դեղինն ու մանուշակագույնը, երկնագույնն ու վարդագույնը… Մի խոսքով՝ ծաղկաբույլ՝ գույների փունջ, որ օրը լցրին գույնով ու տրամադրությամբ:

«Գունապնակը, որ բնորոշ է պրոֆեսոր Լեմս Ներսիսյանի վրձնին, այսօր ներկայանում է ծաղիկներով, որը ներկաներին հնարավորություն է տալիս այս մռայլ օրը ջերմանալու, գեղագիտական նոր երանգներ ստանալու: Համալսարանը, որն այս օրերին նշում է իր հիմնադրման 100-ամյակը, իրապես արժանի է նման բազմաթիվ, բազմապիսի, շքեղ, համեստ, նրբագեղ ծաղիկների»,-ասաց ռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ ընդգծելով, որ այս էլ որերոդ անգամ Լեմս Ներսիյանը տրամադրություն է պարգևում դասախոսներին և ուսանողներին:

«Ցուցահանդեսը խորհրդանշական է՝ այն նվիրվում է 100-ամյա դպրանոցին, որում պրոֆեսորն արտահայ-

տում է իր տրամադրությունը ծաղիկների միջոցով, փոխանցում իր հույզերի գունապնակը:

100-ամյա այս բուհն ունի բազմաթիվ ու բազմապիսի ուղղություններ, որտեղ Գեղարվեստական կրթության ֆակուլտետն ունի իր ուրույն տեղն ու վաստակը: Պրոֆեսիոնալների միջոցով այստեղ ստեղծվել է մի միջավայր, որտեղ ուսանողն առաջին օրից այդ ջերմության, ճաշակի, տրամադրության և մասնագիտական բարձր որակների ձևավորման տիրույթում է գտնվում»,- ամփոփեց ռեկտորը:

Նա շնորհակալություն հայտնեց և շնորհավորեց գեղանկարչին՝ գույներ ու տրամադրություն պարգևելու և երկու շաբաթ դրանք ըմբոշխնելու հնարավորություն ընձեռելու համար:

Բազմաթիվ են Լեմս Ներսիսյանի ստեղծագործությունների երկրպագուները, որոնցից մեկն է մաթեմատիկոս Համլետ Միքայելյանը,-ասաց թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը:

«Լեմս Ներսիսյանի հոգևոր աշխարհն ու իր ստեղծագործությունը չափազանց համահունչ են: Համեստությունն ու բարությունը, աննկատ մնալու պահվածքը նրա ստեղծագործություններում նկատելի է: Գեղանկարչի էությունն ու ստեղծագործությունը միշտ հանդես են գալիս միահյուսված ու միաձույլ»,-ասաց պրոֆեսորը՝ հավելելով, որ պրոֆեսոր Լեմս Ներսիսյանի գոյությունը մեր համալսարանին շատ է հարստացնում:

«Արդեն 51 տարի ես այս բարձրագույն կրթօջախում եմ: Իմ գիտական, ստեղծագործական բոլոր հաջողություններին այստեղ եմ հասել. ոգևորվել եմ հայկական պետական մանկավարժական համալսարանում, ինչի համար շատ շնորհակալ եմ»:

Պրոֆեսորի խոսքն էլ պարզ ու զուսպ էր՝ առանց ավելորդ կաղապարների: Մանկավարժականի շրջանավարտը, որ արդեն տարիներ շարունակ ինքն է կրթում և ուսուցանում սերունդներին, տարիների հեռվից գնահատում է այն միջավայրը, որտեղից սկսել է, բազմապատկել ստացածը և այսուհետև վերադարձնում է . վերադարձնում է շռայլ գույների ու տրամադրությունների հրավառությամբ:

Նայում եմ կարծես արևից սերված գույներին ու մտածում՝ գեղանկարչի տրամադրությո՞ւնն է գույներ ստեղծել, թե՞ գույներն են ստեղծել տրամադրություն: Միևնույն է՝ երկու դեպքում էլ գույնն ու տրամադրությունը մեզ գեղեցիկ օր պարգևեցին:

Շնորհակալությո՛ւն, Վարպետ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

1994-ի պատմական ծնունդը

«Այսօր մենք հայոց վերքի և արդար ընդվզումի մեծ երգչիդ եկել ենք ասելու, որ մենք նորածնվել ու ապրում ենք կրկին-…»,- տարիներ առաջ երդվեցի ես ու երկրորդ անգամ, արդեն ոչ որպես աշակերտ, այլ որպես ուսուցիչ ոտք դրեցի ՀՊՄՀ հենակետային վարժարանի շեմից ներս՝ հարյուրամյա իմաստնություն վաստակած բուհիս ու երիտասարդ վարժարանիս հատուցելու տվածը, երախտագետ լինելու իմ առաքելությամբ:

Վարժարանի ծնունդի պատմական թվականը 1994-ն էր: Ես ու վարժարանը նույն տարիքին ենք, նույն թվի ծնունդ: Երևի դրա համար է նաև, որ ձեռք ձեռքի տված քայլում ենք արդեն տարիներ:

Պրոֆեսոր Ալեքսանդր Ղուշչյանը հիմնադրեց և 1994-1999 թթ. ղեկավարեց վարժարանը: 1999-2022 թթ. վարժարանի ղեկը մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Սաֆարյանի ձեռքում էր: Կրթության, մանկավարժության անխոնջ ու նվիրված աշխատանքի արդյունքում Նաիրա Սաֆարյանին 2022 թվականին վստահվեց ՀՊՄՀ ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորի պաշտոնը: Այժմ վարժարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն է Իրինա Գրիգորյանը:

Իմ սերնդակիցը հարյուրամյա մեր իմաստունի՝ մեր համալսարանի երիտասարդ զավակն է, որ կամրջում է պատանիներին մանկավարժ դարձնելու ճանապարհը: Այստեղ ցանած սերմերը բարեբեր այգիների հիմք են դառնում: Ուրեմն 1994 թվականը բեղուն եղավ համալսարանի համար:

Լինելով հանրապետությունում բուհին կից տարբերակված ուսուցմամբ առաջին ավագ դպրոցը՝ մեր վարժարանը մշտապես ապահովել է կրթական այն մակարդակը, որն անհրաժեշտ է համալսարանը բանիմաց և բարձր առաջադիմությամբ դիմորդներով համալրելուն: 1994-1995 ուսումնական տարին վարժարանն սկսեց շուրջ 100 աշակերտով, 3 հոսքերով՝ հումանիտար (հայոց լեզու, անգլերեն և հայոց պատմություն), ֆիզմաթ (ֆիզիկա և մաթեմատիկա), բնագիտական (քիմիա և կենսաբանություն):

Տարիների ընթացքում դիմորդները մի քանի անգամ ավելացել են, իսկ պահանջարկը հիմք է դարձել վարժարանում ներկայումս գործող նոր հոսքերի ստեղծմանը՝ հումանիտար (անգլերեն, հոգեբանություն, լրագրություն, պատմահասարակագիտական), բնագիտամաթեմատիկական (ֆիզմաթ), մշակութային (պարարվեստի վճարովի լրացուցիչ կրթական ծառայություն, կերպարվեստ-դիզայն):

Այս տարիների ընթացքում վարժարանը համալսարանը մշտապես ապահովել է որակյալ կադրերով: Նա համալսարանի մանկավարժական պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարևոր հենակետ է: Այստեղ գիտահետազոտական, փորձարարական աշխատանքներ են կատարում ամբիոնների դասախոսները, ասպիրանտները, հայցորդները, ինչպես նաև մագիստրատուրայում սովորողները:

Վարժարանի հիմնադրման առաջին իսկ օրվանից այստեղ դասավանդում են բանիմաց և փորձառու ուսուցիչներ, մանկավարժական համալսարանի տարբեր ամբիոնների առաջատար դասախոսներ, դպրոցական դասագրքերի և ձեռնարկների հեղինակներ, տարիների փորձ ունեցող անվանի մանկավարժներ: Վերջիններիս հետ կողք կողքի աշխատում են երիտասարդ ուսուցիչներ, որոնց մաս են կազմում նաև վարժարանի նախկին շրջանավարտները: Կադրային ճիշտ քաղաքականությունը գլխավոր լծակն է վարժարանում կրթության բարձր արդյունքների ապահովման: Վկայությունը վերջին երկու տարիների ընթացքում «ուսուցիչների կամավոր ատեստավորմանը» մասնակցած մանկավարժների գրանցած բարձր արդյունքն է: Վարժարանական 13 ուսուցչի պետությունը հավելավճար կտրամադրի:

Իր գոյության ավելի քան 28 տարիների ընթացքում վարժարանն ունեցել է շուրջ 2600 շրջանավարտ, որոնց գերակշռող մասը ընդունվել է բուհեր, 2000-ը՝ Մանկավարժական համալսարան: Վարժարանի շրջանավարտներից 43-ը տարբեր մասնագիտությունների գծով գիտությունների թեկնածուներ են, որոնցից 8-ը աշխատում են ՀՊՄՀ-ի տարբեր ամբիոններում:

Վարժարանի սովորողներն օգտվում են ժամանակակից լաբորատորիաներից, գրադարանից, միջոցառումների դահլիճից, իսկ համալսարանի ուսխորհրդի հետ համատեղ պարբերաբար կազմակերպվող միջոցառումները հնարավորություն են տալիս սերտացնել շփումն ու համագործակցությունը ուսանողների և աշակերտների միջև:

2019-2021 թթ.-ին վարժարանի շենքը հիմնանորոգվել է: Այն ունի առարկայական լաբորատորիաներ, որոնք հագեցած են համապատասխան գույքով, ուսումնական պարագաներով:

Չնայած երիտասարդ տարիքին՝ վարժարանի տարիների վաստակը վկայում է՝ այն շարունակելու է ծառայել իր պետությանը՝ հայրենիքին տալով նվիրյալ, ազատատենչ, հողի գինն իմացող, գրչով, խելքով, հարկ եղած դեպքում՝ զենքով պատերազմներ հաղթող սերունդներ:

Վանուհի ԲԱՂՐԱՄՅԱՆ
Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Մանկավարժականն ինձ սովորեցրեց երազել



Ես Սարգսյան Սվետլանան եմ, սովորում եմ Մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսում:

Այս տարի լրանում է իմ հարազատ համալսարանի 100-ամյակը. սա մեր բոլորի համար առանձնահատուկ տոն է, որովհետև մենք մի մասնիկն ենք այս պատմական ժամանակահատվածի: Եթե ինձ հարցնեն, թե ինչ է տվել և տալիս Մանկավարժականն ինձ, կասեմ՝ մանկավարժականն ինձ սովորեցրեց երազել. ես այստեղ հասկացա՝ եթե երազում ես որևէ բանի մասին, անպայման այն կատարվում է: Երազանքներս ու նպատակներս մշտապես կապված են եղել ուսման հետ, հետևաբար դրանց կատարման գործընթացում ինձ օգնել են արդեն շատ հարազատ դարձած դասախոսները, ֆակուլտետի անձնակազմը, և, իհարկե, բուհի ղեկավար կազմը:

Մանկավարժական համալսարանում լավագույն դասախոսներն են, որոնց շնորհիվ ուսանողները ձեռք են բերում այնպիսի կարողություններ և հմտություններ, որ բուհն ավարտում են որպես պետության համար պիտանի ու որակյալ մասնագետներ:

100-ամյա բուհն ինձ հնարավորություն տվեց ճանաչելու ինքս ինձ. դա թերևս ամենաբարդ պրոցեսն է յուրաքանչյուրի կյանքում, բուհի պատերի ներսում ես սովորեցի կիսել դիմացինի ցավն ու ապրումները, ձեռք բերեցի հիանալի ընկերներ ուսանողական խորհրդի շնորհիվ, այնուհետև նաև ղեկավարեցի ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

Ուսանողական խորհրդի նախագահի գործառույթներն առավել լայն են. դա հարյուրավոր ուսանողների հետ շփվելու, նրանց խնդիրներին ծանոթանալու և դրանց մասին բարձրաձայնելու, նաև աջակցելու հնարավորություն էր:

Համալսարանի Գիտական խորհրդի անդամ լինելն ինձ համար մեծ պատիվ է: Ես մասնակցում եմ Գիտական խորհրդի նիստերին, իմանում բուհի խնդիրների ու ընդունված որոշումների մասին: Դա նշանակում է՝ ես էլ պատասխանատվություն եմ կրում համալսարանի կարևոր քայլերի, նրա ներկա և ապագա զարգացումների համար:

Սիրելի համալսարն, դու միշտ լինելու ես ամենահարազատ, ամենալավ կրթօջախն ինձ համար, որտեղից միշտ դուրս են գալու բանիմաց և կիրթ մանկավարժներ, ովքեր կրթելու են խելացի սերունդներ:

Սվետլանա ՍԱՐԳՍՅԱՆ
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 1.11.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ